

ԵՔԵՐՈՂԱՅԻ ԱՂԱՏՈՎՈՒԹԵԱՆ ԵՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒ ԵՔ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՆՈՒՆԸ ԲՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐՈՒՆ ԳԵՏԵՐՈՒ ԽՈՒՄԸ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԵՏԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 22, 1996

Հայաստանի նախագահական ընտրություններում ընթացքին հետևող միջազգային ղեկավար խումբը 24 Սեպտեմբերին հրապարակեց ստորև տրուած տեղեկագիրը, որ կը կրէ համակարգող Սայմրն Օգլյորնի ստորագրությունը: Ընտրություններում հետևող ղեկավար կը պատկանին Եւրոպայի Ապահովութեան եւ Գործակցութեան Կազմակերպութեան եւ Ժողովրդային Հիմնարկներու եւ Մարդու Իրաւունքներու Գրասենեակին:

Ընթերցողին ուշադրութենէն պիտի չվրիպի տեղեկագիրին քովանդակութեան եւ եզրակացութեան միջեւ գտնուող հակասությունները:

Ընտրական օրէնքի տրամադրություններուն բրոնաարման յաճախակիութեան մասին տեղեկագիրին մէջ տեղ գտած նշումները կարծէք ոչինչ են, երբ եզրակացությունը կը կարդացուի:

Ե.Ա.Գ.Գ./Ժ.Հ.Մ.Ի.Գ. միջազգային դետերու իմքի 89 դետեր տեղաբաշխութեան Հայաստանի 11 մարզերում: Ընտրութեան օրը դետերը երկու հոգանոց խմբերով այցելեցին 350 տեղամասեր: Տեղամասերը փակելուց յետոյ դետերը հետեւեցին ձայների հաշուումանը 40 տեղամասերում:

Դետերի իմքերը շարունակեցին դիտարկումը գերադաս ընտրական յանձնաժողովներում՝ գիշերուալ ընթացքում հետեւելով 40 ամենախոշոր համայնքային եւ 6 մարզային ընտրական յանձնաժողովների աշխատանքներին:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆԸ ԵՔ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Նախագահի ընտրութեան մասին նոր օրէնքը կատարել չէ, սակայն այն ընտրական օրէնսդրութեան զգալի բարելաւում է: Քուէաբերքիկներին վաւերականութեան ապահովման համար գործի էին դրուած ստուգման եւ հաւասարակշռման բազմաթիւ մեքանիզմներ, տեղամասերում ձայների հաշուուման նոր կարգը, վստահութեամբ ձայնեց կողմից քուէաբերքիկները վաւերացնելու հնարաւորութիւնը, արձանագրութիւններին եւ արդիւնքներին մատչելիութիւնը: Սակայն, ինչպէս ցանկացած օրէնքի դեպքում, կարելորդ գործադրկումն է:

Նոր Կենտրոնական Ընտրական Ցանձնաժողովը եւ մասնաւորապէս նրա նախագահը զգալի ջանքեր ներդրեցին ընտրական աշխատանքների կատարմամբ վըստահութիւնը բարձրացնելու համար: Նախորդ տարւալ համեմատ իխիստ բարձրացել է արհեստավարժութեան մակարդակը:

Ի լրումմէ ոյեւք է նշուի, որ դետերը միջազգային ընտրական չափանիշներին համապատասխանող բազմաթիւ օրինակներ բերեցին: Յատկապէս կը ցանկանայինք նշել ընտրութիւնների կազմակերպումը Լոռի, Շիրակ եւ Տաւուշ մարզերի տարածքների մեծ մասերում, որտեղ դիտարկուել են ընտրական յանձնաժողովների արհեստավարժ աշխատանքի բազմաթիւ օրինակներ:

ՆԱԽԱԳԱՀԱՆ ԸՆՏՐԱՐԾԱԻԸ ԵՔ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ՄԻՋՈՑԵՐԸ

Կասկած չէր յարուցում, որ ոյրն. Տէր Պետրոսեանը, որպէս նախագահի, իր ընդդիմադիրների կատարմամբ զգալի առաւելութիւն էր ակնկալում ընտրարշաւի ընթացքում: Լրատուական Միջոցների Եւրոպական Հիմնարկի կողմից լրատուական միջոցների քանակական դիտարկումը յստակօրէն ցոյց է տալիս, որ ոյրն. Լեւոն Տէր Պետրոսեանի առաւելութիւնը իր ընդդիմադիրների կատարմամբ բաւականին գերազանցում էր այս կարգի իրադրութիւնների համար աշխարհում ընդունուած չափանիշները: Համաձայն Լ.Մ.Ե.Ի. դիտարկումների, ոյրն. Լ. Տէր Պետրոսեանի Օգոստոսի 24-ից մինչեւ 17-ը ոյեւական հետաւստատեւութեան առաջին ծրագրով յատկացուել է 1050 րոյէ եթերային ժամանակ: Իրա համեմատ ոյրն. Վ. Մանուկեանը օգտուել է 65 րոյէ եթերային ժամանակից, ոյրն. Ա. Մանուկեանը 48, իսկ ոյրն. Ս. Պատախեանը 37.6 րոյէից: Սակայն ընթացքէն Մանուկեանը որոշ առաւելութիւն ձեռք բերեց իզգացալին համաձայնութեան ստեղծումից յետոյ, երբ նախագահութեան երեք նախկին թեկնածուները յայտարարեցին իրենց թեկնածութիւնները հանելու մասին, եւ օրինականօրէն օգտագործեցին հետաւստատեւութեամբ իրենց անվար եթերային ժամանակ ոյրն. Մանուկեանի օգտին քարոզչութեան համար, սակայն ժամանակների անհաւասարակշռութիւնը չփոխուեց:

Այս անհաւասարակշռութեան ոյալմանում անհասկանալի էր, որ ոյեւական հետաւստատեւութիւնը ոյրն. Մանուկեանին եւ ոյրն. Մանուկեանին մերժեց յատ-

կացնել ընտրարշաւի վերջին շաբաուալ ընթացքում իրենց հասանելիք վճարովի ժամանակի վերջին հատուածը, այն ժամանակ, երբ ոյեւական հետաւստատեւութիւնը հաստատեց, որ իրենց ծրագրերը այդպիսի հնարաւորութիւն նախատեսում էին:

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՕՐ

Ընտրութեան օրը դետերը ակնատես են եղել ընտրական յանձնաժողովների արդիւնաւէտ եւ որակեալ աշխատանքի օրինակների եւ ոյեւք է նշել, որ այդ դիտարկուել է այցելուած տեղամասերի մեծամասնութիւններում:

Գործնականօրէն դետերը մտահոգուած էին տեղամասերում որոշ ընտրողների ցուցակների ոչ ճշգրտութեամբ եւ յոյս յայտնեցին, որ ապագայում այն կը բարելաւուի:

Միեւնոյն ժամանակ դետերը դիտարկել են օրէնքի նշանակալի եւ լուրջ իախտումներ: Ամենալուրջ իախտումը նկատուել է Երեւանի մարզի կենտրոնական համայնքի 6/22 տեղամասում, որտեղ մի իւումբ մարդիկ, ելեկտրական հոսանքն անջատելուց յետոյ, ալօօրինաբար մտել են տեղամաս եւ գողացել քուէաբերքիկներն ու քուէատուփը: Այս կարգի գործողութիւնները ժողովրդավարական ոյետութիւնում ընդունելի չեն, եւ մենք յոյսով ենք, որ մանրամասն յետաքննութիւն կ'անցկայելուի եւ մեղաւորները, հնարաւորութեան դեպքում, ոյատասխան կը տան դատարանի առջեւ:

Մեզ մտահոգում է նաեւ ոչ իրաւասու անձանց ներկայութիւնը ընտրական տեղամասերում, որը յաճախ կ'նկատուի եւ դիտորդները: Յատկապէս այն վերաբերում է ներքին գործերի եւ ոյաշտոյանութեան նախարարութիւնների ներկայացուցիչների մեծ քանակով ներկայութեանը Երեւանի, Կոտայքի, Արարատի եւ Արմավիրի մարզերի մի շարք տեղամասերում: Ձեռքած որ օրէնքը բուում է յստակ իրաւամասով, սակայն, օգտակար կը լինի աւելի յստակեցնել նշելով, որպէս

անձիւք կարող են գտնուել տեղամասերում միայն, երբ իրենք են քուէարկում:

ԶՕՐԱՄԱՍԵՐԻ ԶՈՒԷԱՐԿՈՒՄԸ

Նախագահի ընտրութեան մասին օրէնքի ամենաթոյլ մասը զինուորականների քուէարկումն է:

Հասկանալի է, որ որոշակի ոյաշտոյանութիւն ոյետք է ապահովուի զօրամասերի համար, ի նկատի ունենալով Հայաստանի վերջին ժամանակահատուածի փորձը, սակայն, զօրամասերին տրուած հնարաւորութիւնը ապահովելու քուէարկողների ցուցակները չարաշահուել էին:

Շատ դեպքերում զօրամասերի ընտրողների ցուցակը ուշ է ներկայացուել եւ որոշ դեպքերում, օրինակ՝ Էջմիածնի 2/3 տեղամասում, ցուցակներում աւելացուել են զինուորների անունները, չնայած տեղամասի ընտրական յանձնաժողովի բողոքներին:

Քուէարկութեան գաղտնիութեան շուրջ իախտումներ եւ ոյալական կազմի կողմից զինուորներին ոյարտադրման օրինակներ դիտարկուել են դիտորդների կողմից այցելուած տեղամասերի 40 ստեղծում, որտեղ զօրամասեր են քուէարկել:

Օրինակ՝ Երեւան մարզի 5/27 տեղամասում 2 դիտորդների իմքեր օրուալ տարբեր ժամերի ներկայ են եղել, երբ ոյալները ցուցում էին տալիս, թե ում ընտրել: Արարատ մարզի 41/1 տեղամասում դիտորդները ակնատես են եղել, թէ ինչպէս ոյալները նրանց գէլ են զինուորներին քուէարկել որոշակի թեկնածուի օգտին:

Ակնյալ է, որ ընտրական օրէնքի զօրամասերի քուէարկութեան մասը ոյետք է վերանայուի, եւ անընթացիւնութեան դեպքում փոխուի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

* Տեղի է ունեցել ընտրական օրէնագրութեան եւ կազմակերպչական աշխատանքների զգալի բարելաւում, յատկապէս Կենտրոնական Ընտրական Ցանձնաժողովի մակարդակով: Շատ դեպքերում տեղամասերի աշխատանքը համապատասխանում էր միջազգային չափանիշներին:

* Ձեռքած մուտքը հետաւստատեւութիւնը բարելաւել է, անհրաժեշտ են հետագայ քայլեր, եւ մենք յուսով ենք, որ դրանք կը ձեռնարկուեն՝ շարունակելու այս գործընթացը:

* Միջազգային դետերի կողմից դիտարկման լուրջ օրինախախտումներն իրենց մէջ չեն ոյարունակում ժողովրդի կամքը ժխտելու համակարգուած փորձ:

* Աւելին՝ միջազգային դետերի կարծիքով, օրէնքի լուրջ իախտումները եւապէս չեն ազդել ընտրութեան արդիւնքների վրայ գործընթացի այս փուլում:

ՍԵՒ – ԾԵՐՄԱԿ

ԴԱՐՁԵԱԼ (ՈՒ ՄԻՇՏ) «ՄԵՂԱԻՈՐ Է ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»

Նախանձելի չէ Հայաստանի իշխանաւոր վարչախումբին այսօրուան դրութիւնը: Մահաւանդ որ անոր մեղքով՝ նախանձելի չէ այսօրուան պատկերը նորանկախ Հայաստանի: Արդէն ծայր աստիճան լարուած պահեր կ'ապրի հայրենի հայութիւնը, որ 22 Սեպտեմբեր 1996ին քուէատուփ դիմեց՝ ազատ կամքով իր երկրի բարձրագոյն իշխանութեան յարմար թեկնածուն որոշելու հաստատականութեամբ, բայց յանկարծ դէմ յանդիման գտնուեցաւ իր կամքին ու ընտրաւորին հետ կամայականօրէն վարող իշխանութեան մը:

Փաստը այն է, որ նախագահական ընտրութեանց վերջնական արդիւնքներու օրինական հաստատումին առանց սպասելու, Հ.Հ.Ծ.ակն վարչախումբը շուտիկութեամբ ուզեց սեփական թեկնածուին յաղթանակ պարգեւել եւ անախորժ անակնկալներու առջեւ դրաւ թէ՛ ինքզինք, թէ՛ ողջ հայութիւնը: Այն աստիճան, որ օրէ օր՝ իր թեկնածուին պարգեւած յաղթական մեծամասնութեան տոկոսը կծկուեցաւ, իմաստազրկուեցաւ եւ յարափոփոխ դարձաւ՝ ընտրութեանց իրաւական ու ժողովրդավարական ընթացքին ճրկատմամբ համատարած կասկածներն ու վերապահութիւնները հիմնաւորելու չափ:

Բայց մեր հարցը այդ չէ: Ի վերջոյ իրաւական ու ժողովրդավարական կարգերու տակ քաղաքական մրցակից ուժերէն մէկը պիտի յաղթէ:

Ո՛վ որ ըլլայ յաղթողը, ժողովրդավարութիւնը կը ստրկեցնէ, որ պէտք է խոնարհիլ սեփական ժողովրդի մեծամասնութեան կամքին եւ կատարած ընտրութեան առջեւ: Եւ մենք մեր ժողովրդի կամքին առջեւ միշտ խոնարհող եղած ենք:

Խոնարհելու յաւելեալ պատճառ ունինք մահաւանդ այսօր, երբ Հայաստանի վերածնալ անկախութիւնն ու ազատութիւնը լիարժէք ամրագրելու բախտորոշ հանգրուան մը կը բոլորենք ազգովին:

Նոյնիսկ եթէ գաղափարական ու քաղաքական մեր ուղեգիծէն տարբեր ընտրաւոր մը ի նպաստ մեր ժողովրդին մեծամասնութիւնը իր քուէն կու տայ ազատ կամքով՝ մենք դարձեալ ու անպայման կը խոնարհինք անոր որոշումին առջեւ, որովհետեւ համաժողովրդական ամէն քուէարկութիւն, երբ կատարուած է ազատ, օրինական եւ արդար պայմաններու մէջ, ամէն բանէ առաջ եւ վեր կ'ամրապնդէ սեփական երկրի անկախութիւնը եւ ազգային պետականութեան յառաջդիմութիւնն ու հզօրացումը:

Մեր հարցը կը կալանայ ճիշդ այս կէտին մէջ:

22 Սեպտեմբերի նախագահական ընտրութիւնները չընթացան ազատ, օրինական եւ արդար պայմաններու մէջ: Ոչ ալ քուէարկութեանց արդիւնքները օրինականօրէն հաստատելու եւ ամփոփելու գործը զերծ մնաց վարչախումբի կամայական միջամտութիւններէն:

Այդ պատճառով ալ, քանի մը օրէ ի վեր, խոռվքի ու տագնապի մատնուած է Հայ ժողովրդը՝ յատկապէս Հայաստանի մէջ եւ ընդհանրապէս ի Սփիոռաշխարհի: Լուելի՛մ. Նրեւանէն կը հասնին լուրեր, որոնք կը խօսին վարչախումբին եւ ընդդիմադրութեան միջեւ առճակատման, նաեւ՝ կրակոցներու վտանգաւոր մագլցումի մասին:

Մենք շատոցք ըսած ենք եւ մահաւանդ այսօր հազանգ հնչեցնելով կը շեշտենք, որ Հայրենիքի պէտք է խնայել ներքին առճակատումը, արհիւնահեղութիւնը եւ անկայունութիւնը:

Նորանկախ Հայաստանը դժուար թէ տոկալ մնան ցնցումներու:

Բայց նաեւ մենք, մահաւանդ մենք չենք կրնար շքածել ընդգումն ու ցատումը մեր ժողովրդի, որ մինչեւ 22 Սեպտեմբեր 1996 կատարուած մենատիրական եւ սիակոսակցական ամէն ոտնձգութիւն համբերատարութեամբ անտեսեց, որպէսզի նախագահական ընտրութեանց օրը իր կամքը արտայայտէ եւ իր հատու պատասխանը տայ տարիներ առաջ իր վստահութեամբ իշ-

խանութեան տիրացած, բայց ազգային արժէքներ ու սրբութիւններ իշխանութեան հաշիւներու գոհաբերած «տղոց»...

Եւ ինչպէս ամէն ժողովուրդ, որ սեփական ծոցէն ծնունդ առած խոստըմնադրուածներուն նկատմամբ յատուկ ծառացումի կը դիմէ, նոյնպէս հայրենի հայութիւնը 22 Սեպտեմբերին ճշմարտութեան պատիւ առջեւ դրաւ ներկայ վարչախումբը:

Իսկ այս իշխանութիւնը չուզեց տեսնել, թերեւս նաեւ չկրցաւ տեսնել, որ սեփական ժողովրդի կողմէ թոյլատրելի սահմանագիծը շատոց անցած էր՝ ազատ ու անկախ Հայաստանը վերածելով եւ՛ շտեմ նոր դասակարգի մը ազարակին, եւ՛ ազատորդիներու մեծ բանտի...

Չուզեց տեսնել մահաւանդ այն սիսանականութիւնը, որ ցուցաբերուեցաւ ժողովրդավարական իր առաջին քայլերը նետող մեր ժողովրդի կողմէ, որ 1988ի շարժման ծնունդ եւ պատմական շրջադարձի այդ օրերու տենչերուն ու տեսլականներուն հաւատարիմ մնացած հայորդիներով 22 Սեպտեմբերի ընտրութիւնները վերածեց ժողովրդավարական ընտրաւոր ու շրջադարձի տօնախմբութեան:

Երեւանէն ստացուած լուրերը կը շեշտեն, որ ընդդիմադրութիւնը եւ անոր հանրահաւաքներուն ընդառաջող մեր ժողովրդը ամէն ճիգ կը թափեն, որպէսզի Հայրենիքին խնայեն ներքին յոռեւորն ցնցումները:

Յետ-ընտրական անելիին իրաւական եւ ժողովրդավարական լուծում մը զըտնելու զօրաշարժին իր կարգին լծուած է յատկապէս Դաշնակցութիւնը, որ թեւեւ լաւուս - օրինականութեան - ինչ-ինչ կաշկանդումներով հեռու պահուեցաւ ընտրութեանց լիիրաւ մասնակցութեան, բայց որ թէ՛ նախընտրական փուլին, թէ՛ ընտրութեանց ընթացքին եւ թէ՛ յետ-ընտրական զարգացումներու բոլոր պահերուն եղաւ ամբողջականօրէն ներկայ, ի սպաս Հայրենիքի դէպի լիարժէք անկախութիւն, ազատութիւն եւ ընկերատնտեսական բարօրութիւն յառաջխաղացքին:

Ահա՛ իր այս ներկայութեան եւ բոլորաւոր մասնակցութեան համար Դաշնակցութիւնը օրհասական այս պահերուն դարձեալ նշուակ կը դառնայ մեր երկրի իշխանաւոր վարչախումբի ցեխարձակումին:

«Արմէնփրէս»-ի 24 Սեպտեմբերի հաղորդումներուն մէջ, ընդդիմադրութեան սիսանական թեկնածու վարկաբեկելու ճիգով, վարչախումբը հանրահաւաքներուն եւ բողոքի ելոյթներուն համար դարձեալ պատասխանատու կը յայտարարէ Դաշնակցութիւնը՝ ժողովրդը «լէտիութեան» մղելու այպանելի տրամադրութիւն վերագրելով մեր կուսակցութեան:

Ի՛նչ փոքր, որ մահաւանդ 22 Սեպտեմբերէն ի վեր Դաշնակցութիւնը ծայրագոյն ինքնազուպում կը պահանջէ իր շարքերէն եւ մամուլէն, որպէսզի Հայրենիքը նուազագոյն ցնցումով անցնէ իրաւական եւ ժողովրդավարական արժէքները ոտնակոխող այս վարչախումբը կարգի հրապարակելու ներկայ փուլը:

Ի՛նչք տակաւին կը հաւատանք, որ Հայաստան ի վիճակի է ժողովրդավարութեան յաղթանակի վերածելու 22 Սեպտեմբերի ընտրութիւնները:

Յիսուն եւ այսքան տոկոս քուէներու մեծամասնութեան համար կենաց-մահու պայքար մղող եւ ամէն ձեւի բռնադատումի գացող վարչախումբ մը չի կրնար նորանկախ մեր երկրին առաջատար ուժը դառնալ:

Բայց մենք պիտի ողջունենք ազատ ու արդար ընտրութեանց օրինական արդիւնքով իշխանութեան դէկին եկող ուժը...

Նոյնիսկ եթէ դարձեալ մեղաւոր պիտի հռչակուինք:


2Է՝ որ (միշտ) - մեղաւոր է Դաշնակցութիւնը:

Թող այդպէս ըլլայ, եթէ պէտք է այդ գինը վճարուի՝ Հայաստանի Հանրապետութիւնը իրապէս Ազատ, Անկախ եւ Իրաքեալ մեր հայրենիքի ամրակոտ վէմը դարձնելու համար:

ՀԻՆ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ

ՍԱՐԱՓԱԶԳՈՒ ՍԿԻԹԱՅԻՆԵՐԸ ԵՒ...

ԱՌԱՍՂԵԼԱԿԱՆ ԶԻԱՒՈՐՆԵՐ Ն. Զ. 7ԴԳ ԳԱՐՈՒՆ ԱՆՅԱԾ ԵՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԷՆ՝ ԻՐԵՆՅ ԵՏԻՆ ԶԳԵԼՈՎ ՄՇԱԿՈՅԹԻ ՄԸ ՈՍԿԵԱՅ «ԲԱՆԱԼԻ»ՆԵՐԸ



ՈՍԿԵԶՕԾ ՀԱԿԱՌԱԿՈՐՆԵՐ ԿԸ ՄԱՐՏՆՉԻՆ 2400 ՏԱՐՈՒԱՆ ՍԱՆՏՐԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Փոշիի ամպերու եւ որոտագին դոփիւններու ընդմէջէն արշաւող կատաղի ծիաւորներն ունին իրենց ծիւղերը կը զարդարէին ոսկիով: Դարեր շարունակ անուանման էնք, անոնք խորհրդավոր կերպով անհետացան՝ իրենց նստին ձգելով քաջութեան եւ վայրագութեան առասպելներ, ինչպէս նաեւ՝ գերիշխող դամբարանաբուրներ, շուայլօրէն բեռնաւորուած՝ յաւիտենութեան համար:

Սկիթական դամբարաններէ յայտնաբերուած իրեր կ'ապացուցեն կատաղի կեանք մը, որ մեծ մասամբ կ'ապրուէր ծիւղ քամակին: Անոնց հետ թաղուած ոսկեայ նման իրեր շինուած են յոյն ոսկերիչներու ձեռքով եւ սկիթական ճաշակով:

Ուրբանիոյ մէջ տեղուած վալրի մը ցեխոտ ընդերքներէն դուրս բերուած է կուրծքի զարդ մը (տեսնել նկարը)՝ մարդկային եւ կենդանական ճրքաշխատ ձգտակներով: արծիւի գլուխով եւ առիւծի մարմնով թեւաւոր արարածներ: Ընթեր, առիւծներ, ոչխարներ եւ նոյնիսկ մարտիներ քանդակուած են անոր վրայ: Հնագետներ երբեք չեն հասկնալ լայնութեան մը դէմ լանդշափէն չէին գտնուած: Անոնք երեւան հասած էին ամէնէն գեղատեսիլ զարդը, որ կը պատկերէր սկիթացիներուն: Վաշկատուն ժողովուրդ մը, որ բարբարոս էր եւ, միաժամանակ, իր ոսկեայ փրփրէն դառնորդ գլխեր գեղեցկութիւնը գնահատելով:

Ն. Ք. 7րդ դարուն Ասիայէն գաղթելով սկիթացիները շուրջ 400 տարի տիրած են Եւրոպական տափաստաններուն եւ լեռնաշղթաներուն մէծ մասին: Անոնց թագաւորութիւնը իր գաղափարկտի օրերուն կը տարածուէր Իսկուր գետէն դէպի արեւելք, դէպի ալսօրուան Ուրբանիոյ, Խրիմի եւ Ռուսիոյ տարածքը, մինչեւ Տոն գետը եւ կովկասեան լեռները:

Թեւեւ հնագետներ բաւական հսկայածաւալ

տեղեկութիւն ի լալտ բերած են սկիթացիներուն մասին, սակայն անոնք աւելի կը դեգերին շուրջի, քան՝ լոյսի մէջ: Արդեօք իրենց փառքի շրջանին որեւէ մարաքալաք ունեցած են, ինչպէս լալտ բերած անոնց կալսութիւնը կործանած է: Սկիթացիք գրաւոր որեւէ արձանագրութիւն չեն ձգած, որ կարեւոր պատասխանել նման հարցումներու, սակայն արդեօք անոնք ամբողջութեամբ անկալտացած են: Անոնց հողային տարածութիւններուն եզրին, կովկասեան լեռներուն ծալքերուն մէջ մինչեւ ալսօր կարելի է հանդիպիլ մարդոց, որոնք կը խօսին պարսկերէնի նման լեզու մը, որ նման է սկիթացիներուն լեզուին լեզուին: Այս մարդիկը կը կիրարկէին սկիթացիներու լատուկ կենցաղ եւ լատուկ ակաճանք մը կը տածեն կրակի հանդէպ (տեսնել շրջանակը):

Յոյն պատմիչներ, մասնաւորաբար Հերոտոդոս, նախնական տեղեկութիւններ հալալաբած են սկիթացիներուն մասին՝ յիշատակելով, որ իբրեւ պատերազմիկներ անոնք ամբարձրել էին եւ բաժակներ կը շինէին իրենց զոհերուն գանկերէն եւ վերարկուներ՝ անոնց մորթէն:

ՊԱՐՍԻԿՆԵՐՈՒ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆԸ

Ն. Ք. 513ին, ալս վաշկատուն ցելը գրաւեց պարսիկներու Տարխու Ա. թագաւորին ուշադրութիւնը, որ աւելի քան 1500 քմ. համալ կտրեց գտնուէր հալածելու եւ բնաջնջելու համար: Թեքեւս ան ալս միջոցին դիմած էր փորձելով աւազակներէ պաշտպանել իր կալսութեան սահմանները կամ խորտակել թշնամի յոյներուն եւ անոնց նգեակակի կղզիներու դաշնակիցներուն հացահատիկի մատակարարումը: Սկիթացիք երկրագործներ չէին, սակայն հաւաքական է, որ իրենց հակաշէնիւն տակ պահած ըլլան հացահատիկի վաճառքը Սեւ ծովու շուրջ, ուր կային լուսական բազմաթիւ գաղութաւալներ:

Մինչ Տարխուս լեգէոնները կը լառաշահուին, սկիթական հեծելազօրքը կը նահանջէր դէպի Եւրոպական տափաստաններուն խորքը՝ հրկիզելով իր ցետին ձգած հաւաքարի: Հերո-

տոդոս գրած է, թէ Տարխու ստիպողական հրահանգ մը ուղարկած է սկիթացիներու Խաւսի խորտու իշխանաւորին, ըսելով՝ «Կը բաւ խոյս տաս, ալ՝ կոտի»: »



ԽՈՐՀՐԴԱՌՈՐ ԼՄՆԶԱԶԱՐԴԸ

Իր ոսկիին ծանրութենէն (1.3 քկ.) անհուճօրէն աւելի արժող ալս լանջազարդը կը պատկերէ սկիթական առօրեայ կեանքը: Անոր վրայ ծի մը կը դիտենք իր մորուկը, հովիւ մը կը կթէ իր ոչխարը, մերկ կուրծքով պատերազմիկներ ոչխարի մորթով հանդերձանք մը կը պատրաստեն... Իսկ հնագետներ տակաւին կը վիճին 1971ին ցեխոտ դամբարանէ մը յայտնաբերուած ալս լանջազարդին խորհրդանշական իմաստին շուրջ:

Խաւսի խորտու պատասխանած է, թէ սկիթացիք բաղաբեր էր մշակելի դաշտեր չունէին, որ կուտէին անոնց պաշտպանութեան համար, սակայն ունէին իրենց պաշտպանութեան գերբազմակերպը: «Եկու իր, գտի զանոնք եւ հրամայէ անոնց կործանումը: Այդ ժամանակ պիտի գիտնաս, թէ արդեօք պիտի կուտի՞ ըր», ըսած է ան:

Հերոտոդոս կը պատմէ, թէ ի վերջոյ Տարխուս լաջողած է սկիթացիները բաղաբար ձգել եւ կուտի մէջ ներքաշել: Ան իր հազարաւոր զինուորները լաճակումի պատրաստած է, սակայն սկիթացիները միայն արհամարհանքով դիմաւորած են անոր տպառական ծեաւկերպութիւնը: Տարխուս նախ լաճակողական լայնութիւն տպառելու ժամանակ սկիթացիներէն մաս մը սկսած է նապատակներ հալածել: Տարխուս լուսահատ իր երկիրը վերադարձած է...:

Յատկա չէ, թէ ալս վաշկատուն ժողովուրդը ճիշդ ուր երազաբար «խաղած է» պարսիկներու վեհապետին հետ: Սակայն հաւանական վալր մը կը նկատուի Ուրբանիոյ մէջ Դեմիւր գետին ոչ շատ հեռու գտնուող բլուր մը, ուր ալժժ՝ արեւածաղիկներ կը մշակուէին, եւ ուր բարձրացած դամբարանաբուրները կամ բուր-

կանները կը լիշեցնեն ալս գերբազմակերպը, զորս Խաւսի խորտու կործանելու մարտահրաւեր ուղղած էր Տարխուսի:

ՀԱՐՈՒՍՏ ԳԱՄԱՐԱՆԱՐՈՒՐՆԵՐ

Ժամանակի ընթացքին մինչեւ 20 մէրբարձրութեամբ բուրկաններ բազմացած են Դեմիւր գետին վարին շրջաններուն կամ. Հերո-



ԱՆՅԱԾ ԳԻՆԵՍՈՂՆԵՐ

Սկիթացիները յունական գիւհիի «ծովեր» կը սպառէին: Հերոտոդոսի համաձայն, անոնց ալս անյազ մարմաքը յաճախ անկուտի առաջնորդած է: Հա-

կառակորդ կողմին մօտ գիւհարուքով յատկանշուած խրախճանքի մը հրաւիրուելով՝ սկիթացի մեծաւորներ յաճախ անմիտ կերպով կը հարբեցային եւ դիւրութեամբ կը սպաննուէին:

Նկարին մէջ կ'երեւին սկիթացի գիւհարներ, որոնք իրենց արտաքին խառնուած գիւհի կը խմեն, իբրեւ եղբայրութեան ծիսական վաշխարում:

Ինչպէս գրեթէ բոլոր մեծ բուրկաններու պարագային, Թուրքիայի Մոկիլան վաշուց կողովորում է,

սակայն՝ ոչ ամբողջութեամբ: Հնագետներ հունկէ երեւան հանած են շքեղօրէն զարդարուած կնոջ մը մնացորդները: Ան ունէր ոսկեայ թագ մը, ոսկեայ ալարանջաններ եւ մատանիներ իւրաքանչիւր մատին: Թեւեւ անոր շրջագետներ փտած էր ժամանակի ընթացքին, սակայն կմախքին վրայէն հաւաքուած ոսկիի բարակ շերտերը կ'ապացուցեն, թէ սկիթքը կարուած են շրջագետներին կողմին վրայ:

Թուրքիայ Մոկիլան ցարդ լայնութեան սկիթական ամէնէն անեղ գերբազմակերպը: Անկա Դեմիւրի մօտակալ կարգ մը դամբարանաբուրներուն նման հսկայական չէ եւ, հնագետներու կարծիքով, կրնայ շրջանային մեծաւորի մը եւ անոր կնոջ թագման վալրը եղած ըլլալ: Հունկէ լայնութեան են նաեւ ոսկեայ պատեանով սուր մը եւ ծիսական բնոյթ ունեցող ոսկեայ փաքը եւ սրածալը գլխանցներ:

Պատմագետներ սկիթացի միայն քանի մը իշխանաւորներու եւ անոնց գերդաստանին անունը գիտեն: Անոնցմէ են աթալեաները, որոնք իրենց թագաւորին անունով մետաղադրամներ հատած են: Դժուար է գիտնալ Թուրքիայ Մոկիլայի մէջ թաղուածներուն ինքնուրուին: Ցարդ պղուած բազմաթիւ բուրկաններէն միայն 3ը կարելի եղած է առնչել յատուկ անձերու:

ՅՈՅՆԵՐՈՒ ԳԱՐԵԱԿԻՅՆԵՐԸ

Սկիթական գերբազմակերպ լայնութեան ոսկեայ հրաշակերտ իրերը սկիթացիներու գործերը չեն: «Եթէ արհեստաւոր մը նաեւ բաւառաշրջիկ է, երկարատեւ չի կրնար ցատիլ իր արհեստանոցին մէջ: Անոնք անոնք յալս իրերը շինուած են սկիթացիներուն կենցաղին ծանօթ արհեստաւորներու կողմէ», կ'ըսէ հնագետ մը: Անոնց մեծամասնութիւնը Սեւ ծովու եզրին բնակող յոյն արհեստաւորներու կը պատկանին: Հաւանաբար յոյն արհեստաւորը կը խորհրդակցէր սկիթացի լաճախորդին հետ, նախքան իր մը ձեւագծելը:

Սկիթացիք յոյներուն հետ նաեւ խեցեղէնի եւ գիւլին առեւտուր կ'ընէին: Անոնք անյազ հարբեցողներ էին: Գէթ ալայիս կ'ապացուցեն անոնց հետ թաղուած գիւլին կաւեւ ամփոքները, որոնք կը կրեն գիւլին պատրաստողին կամ գալն բնակողին կնիքը: Նման կնիքներ բաղադարելով՝ հնագետներ սովորաբար կը լաջողին ճշդիւ գերբազմակերպը հնուրիւնը: Թուրքիայ Մոկիլային նման ամփոքներու բեկորներ չեն լայնութեան, թեւեւ անոր շուրջ ցրուած փայլուն խաւով կաւեւ ամանները լաք եւ նման են Ն. Ք. 350էն 320 տարիներուն Աթենքի մէջ գործածուած ամաններուն:

Բուրկանները լայնութեան իրեր նաեւ կ'ապացուցեն, թէ սկիթացիք ունեցած են իրենց



ՓՈԹՈՐԻԿԻ ՀԱՄԱՐԱՆ

Ասիոյ կեդրոնական տափաստաններէն Եւելով, սկիթացիներու վաշկատուն ցելը Ն. Զ. 7րդ դարուն թափանցած է Սեւ ծովու հիւսիսային շրջանը, ապա դէպի հարաւ դառնալով՝ ուղղուած է դէպի Կովկաս եւ յարձակած է բոլոր ուղղութիւններով: 30 տարուան ընթացքին հողեր գրաւած է մարերէն եւ ասորեստանցիներէն, կործանած է Սիւրաքեթի մէջ գտնուող քաղաքներ եւ հասած է մինչեւ Պահեստին: Մերձաւոր Արեւելքի քաղաքակրթութիւններուն հետ ալս երկարատեւ բախումը նաեւ իր յարատեւ կնիքը դրած է սկիթական գիւհագործութեան, արուեստին եւ աշխարհայեացքին վրայ:

ցելին լատուկ զենքերը, ինչպէս՝ նետի դեմ ամրմխը պաշտպանող մետաղե փուխերով զարահանդերներ, երկաթե սուրբեր, պրնդէ, ոսկորէ եւ երկաթէ շինուած փշոտ նետեր, որոնք միայն կը բղկտէին դուրս հանուելու պարագային:

Ուրբանիոյ Հնագիտական Հիմնարկին մէջ պահուած է սկիթական փայտե աղեղ մը, որուն նման միայն երկու ալս աղեղներ գտնուած են: Ունեիին եւ լատեիին (ալտըր) փայտով շինուած ալս աղեղը 80 սմ. երկարութիւն ունի եւ լուսական սիկմա (Σ) տառին նման կազմուած է զոյգ ոլորներէ: Թեքեւս ալսային աղեղ մըն է, որ Սեւ ծովուն մօտակալ Սլովա առեւտրական գիւղաւանէն լայնութեան հին արձանագրութեան մը համաձայն, ժամանակին նետ մը կը բոցներ մինչեւ 513 մէրբար հետու. անհաւատալի, եթէ ճշմարտութիւն է...:

... ԱՌԵՇՈՒԱԾԱՅԻՆ ԱՆԿՈՒՄԸ

Ն. Զ. 4րդ դարուն սկիթացիք կ'ապրէին իրենց գոյութեան ամէնէն հարուստ ժամանակաշրջանը: Դաւուր եւ Տոն գետերուն միջեւ տարածուած բնակչութիւնը հասած էր կէս միլիոնի եւ առեւտրական կապեր հաստատած էր յոյներուն հետ՝ միաժամանակ երկաթէ իրեր դարբնելով: Այս դարաշրջանին պատկանող դամբարանաբուրներէն ի յայտ կու գան ոսկեայ գանձեր: Սակայն Ն. Զ. 3րդ դարուն պատկանող գերեզմանները արդէն դատարկ են:

Տարիներ շարունակ սկիթացիներու պատմութեան մասնագետները հաւատացած են, թէ երբեմնի ալս սարսափազդող պատերազմիկները տեղահան եղած են ափական վաշկատուն ալս ցելի մը՝ սարմատներու կողմէ, որոնք Սկիթիոյ արեւելեան հողամասերը թափանցած են Ն. Զ. 4րդ դարուն: Բռնութիւններ ծագած ըլլալու են նաեւ արեւմտեղի մէջ, ուր սկիթացիք հաւանաբար մարտնչած են մակեդոնացիներուն դէմ: Սակայն որեւէ փաստ չկայ, որ ապացուցէ, թէ Դեմիւր գետին շրջակայ հողատարածքը գրաւուած է սարմատներուն կամ ալս ժողովուրդներու կողմէ՝ գէթ մինչեւ սկիթացիներուն անհետացումէն կէս դար ետք:

Այլ տեսութիւն մը կ'ըսէ, թէ կիմալական փոփոխութիւն մը, ինչպէս երաշտը, չորացած է անոնց արօտավայրերը եւ զանոնք աղած է գաղթի: Կամ թեքեւս արօտավայրերը չափազանց արածուելով սակաւաբն հարձած են, ինչ որ սկիթական ցելախուներուն միջեւ արածելի հողամասերու եւ քաղաքական հակակշիռի համար կու լառաջացուած է:

Խորքին մէջ պատմագիտութիւնը յստակ պատասխան մը չունի Սկիթիոյ կործանումին վերաբերեալ: Հաւանաբար սկիթացիները հետգնետէ աւելի մատակեաց կեանք մը ապրելով՝ կորսնցուցած են իրենց թափանցողիկ ոգին, ինչ որ առաջնորդած է մշակութային քալքալումի եւ ներքին ճնշումներէ լառաջացած փլուզումի:

Սկիթիոյ կործանումէն ետք, սկիթացիներուն մէկ մասը գաղթած է դէպի հարաւ Խրիմ, ուր որոշ ժամանակ մը առեւտրական կապերը շարունակած է յոյներուն հետ՝ ցորենի եւ ճախիրի փոխադրէն տալալով ոսկեայ իրեր, գիւհի եւ զէնքեր: Սակայն Ն. Զ. 3րդ դարուն սկիթացիք թալանած են լուսական կարգ մը բնակավայրեր, ապա ժողովուրդը տեղահան ընելով գրաւած են անոնց բերդի հողերը: Անոնք ունեցած գոյութիւնները աղէտայի հետեւնը ունեցած են Ն. Զ. 108ին, երբ Պոնտոսի թագաւորութիւնը յարձակած է իր կարգապահ փաշեցեղերով եւ պարտութեան մատնած է երբեմնի մարտունակ ոգին կորսնցուցած սկիթական տկար բանակները՝ հրկիզելով նաեւ անոնց Խրիմի բնակավայրերը:



ՊԱՅԷՐՆԸ «ԱՐՏԱՔՍԵԼԷ» ԵՏՔ

ՎԱԼԵՆՍԻԱ «ՁԷՆՔԵՐԸ» ԿԸ
ԼԱՐԷՆՍԻԱ ՓՐԱԿԱՅԻ ԴԻՄ

Անցեալ Ուրբաթ, Ժրնեւի (Չուիցերիա) մէջ տեղի ունեցան ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի եւ Եւրոպայի բաժակակիր խումբերու բաժակի Բ. հանգրուանի մրցումները։

Վալենսիա, որ ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի մրցումներէն՝ դուրս ձգած էր բաժակակիր Պալէրմո Միլանիսը, պիտի մրցի Սլաւիա Փրակայի դէմ։ Չեխիոյ ախոյեանը նախապէս իր մասնակցութիւնը բերած էր ախոյեան խումբերու բաժակի մրցումներուն եւ պարտուած էր Կրէսնոփրոգ Յիւրիսէն ու միացած ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի մրցաշարին։

Իր դաշտին վրայ 3 — 0 արդիւնքով յաղթական, Վալենսիա, Պալէրմո Միլանիսին դէմ միայն 1 — 0 արդիւնքով պարտութիւն մը կրեց եւ կրցած հասնիլ յաջորդ հանգրուանին։ 1986էն ի վեր ոչ մէկ սպանական կազմ կրցած է չափաւոր բաժակի։ Այդ տարի, Ռէալ Մատրիտ չաճած էր մրցաշարքը, իսկ Սլաւիա Փրակա դուրս ձգած էր Շուէտի Մալմոն (5 — 2)։

Ինթէրն Միլան, որ 1991ին չաճած էր այս բաժակը, յաղթելէ ետք Աւստրիոյ Քազինո Սալցպուրկին, պիտի մրցի աւստրիական ալ կազմի մը Քազինո Կրացի դէմ։

Անգլիոյ Նիւքասթլ ԵՈՒ. Նայթրոլ պիտի մրցի Հունգարիոյ Ֆերենքվարոչին դէմ։ Նախապէս «Կաշադակներ»ը 1989ին չաճած էին այս բաժակը, յաղթելէ ետք Հունգարիոյ Ռայփէշէ Տոսչային։ Այդ օրերուն, մրցաշարքը ունէր այլ անուն։

Սլաւիա Փրակային պէս, Ֆերենքվարոչ ախոյեան խումբերու բաժակի մրցումներուն մասնակցեցաւ եւ ապա պարտուելէ ետք, միացաւ ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի մրցաշարին։

Գերմանիոյ Քարլսրուհէն պիտի մրցի Քարլոս Պիանչին մարզած Ա. Էս. Ռոմային դէմ։

Հաւասարակ չուուած մրցում մը պիտի ըլլայ Մէտշընկլատպախ — Մոնաքո ճակատումը։

ԲԱԺԱԿԱԿԻՐ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԲԱԺԱԿ

Փարիզ Սէն Ժերմէն կրնայ դուրսութեամբ հասնիլ Գ. հանգրուան, դուրս ձգելէ ետք Թուրքիոյ Կալթասարայը։ Ա. հանգրուանին, Փարիզի կազմը դուրսութեամբ տիրապետած էր Լիւթթընշթայնի կազմին՝ Վատիւզին վրայ։

Անգլիոյ Լիվըրքուլը պիտի մրցի Չուիցերիոյ Սիոնին դէմ, որ միայն մէկ անգամ՝ 1992ին չաճած է, ախոյեանութիւնը։ «Կարմիրներ»ուն փափաքն է տիրանալ այս բաժակին, որ միշտ ալ խուսափած է



Լեկուիքի եւ Մոնաքոյի իր ընկերները, դուրսութեան կրնան մատուցիլ ՄԵՕՆԷՆԿլատպախի դէմ։

Լիվըրքուլին։

Պատասխանատուներէն Փիթըր Ռոպինսըն վրտահեցուց, որ անցեալ տարուան սխալը պիտի չկրկնուի եւ խումբը ամէն գնով պիտի ճակատի, միայն ու համար մրցաշարքին մէջ։

Անցեալ տարի Լիվըրքուլ պարտուած էր Պրոնտպիլին։

Սպանիոյ Պարսելոնան, որ չաճած էր Եւրոպայի ե-

րեք բաժակներն ալ, պիտի մրցի 1991ի Եւրոպայի ախոյեան, «Կարմիր Աստղ» Պելկրատին դէմ։ «Պարսա»ի մէկ բանբերը՝ Ամատոր Պեռնապէլըսաւ, որ յատկապէս Պելկրատի մէջ մրցումը շատ դժուար

պիտի ըլլայ, նկատի ունենալով մրցակից կազմին համակիրներուն ստեղծած մթնոլորտը։

Հոլանտայի Փ.Ս.Վ. Այնտհոփընը պիտի մրցի Նորվեկիոյ Ֆ.Ք. Պրանին դէմ։ Հոլանտացիք կրնան դուրսութեամբ հասնիլ յաջորդ հանգրուանին։

Այլ գորաւոր կազմ մը՝ Պենֆիլթա Լիվպոն, իր դէմ պիտի ունենայ Ռուսիոյ Լոքոմոթիւ Մոսկուան։

Վերջապէս, Ֆրանսայի Գ. դասակարգի Նիմըպիտի մրցի Շուէտի Սոլնային դէմ։ Ցաղթանակ մը եւս, եւ Նիմ կրնայ պատմութիւն կերտել, որովհետեւ... Գ. դասակարգէն է։

Ստորեւ յայտագիրը.

●ԵՈՒ. Է. Է. Ա. Ի ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ (Բ. ԱՄԷԿՐՈՒԱՆ)

Երթի մրցումները 15 Հոկտեմբերին. դարձի՝ 29 Հոկտեմբերին.

Տիւնս Թիֆլիս (Վրաստան) — Պաւլսթա (Փորթուգալ) Լեկիա Վարշաւա (Լեհաստան) — Պեշթըր (Թուրքիա) Սլաւիա Փրակա (Չեխիա) — Վալենսիա (Սպանիա) Համպուրկ Ս.Վ. (Գերմանիա) —

Սպարտակ Մոսկուա (Ռուսիա) Վիթորիա Կիւսարաէշ (Փորթուգալ) —

Անտըրվէրթ (Պելճիքա) Քարլսրուիէ (Գերմանիա) — Ա. Էս. Ռոմա (Իտալիա)

Հելսինկի (Ֆինլանդ) — Նիւքասթլ (Չուիցերիա) Էսփանիոլ (Սպանիա) — Ֆլէյմնորտ (Հոլանտա)

Ֆ.Ք. Պրան (Պելճիքա) — Նասիոնալ Պորթէշ (Ռուսիա) Պոր. ՄԵՕՆԷՆԿլատպախ (Գերմանիա) —

Մոնաքո (Ֆրանսա) Ինթըր Միլան (Իտալիա) — Քազինո Կրաց (Աւստրիա)

Ապըրտին (Սլովակիա) — Պրոնտպի (Դանիա) ՄԷս (Ֆրանսա) — Սփորթինկ Լիզպոն (Փորթուգալ)

Ֆերենքվարոչ (Հունգարիա) — Նիւքասթլ (Անգլիա) Շալթէ 04 (Գերմանիա) — Տրապիզոնսփոր (Թուրքիա)

Լաքո Ռոմա (Իտալիա) — Թեմերիֆէ (Սպանիա)

●ԲԱԺԱԿԱԿԻՐ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՄՐՑԱՇԱՐՔ

(Բ. ԱՄԷԿՐՈՒԱՆ)

Երթի մրցումները՝ Հոկտեմբեր 17ին. դարձի՝ Հոկտեմբեր 31ին

Օլիմպիա (Սլովենիա) — Ա. Է. Ք. Աթէնք (Յունաստան)

Պարսելոնա (Սպանիա) — «Կարմիր Աստղ» Պելկրատ (Եւրոպայի)

Կալթասարայ (Թուրքիա) — Փարիզ Սէն Ժերմէն (Ֆրանսա)

Ֆ.Ք. Պրան (Նորվեկիա) — Փ.Ս.Վ. Այնտհոփըն (Հոլանտա)

Ֆիորենթինա (Իտալիա) — Սփարթա Փրակա (Չեխիա)

Սիոն (Չուիցերիա) — Լիվըրքուլ (Անգլիա)

Նիմ (Ֆրանսա) — Ա. Ի. Սոլա (Շուէտ)

Պենֆիլթա Փորթուգալ — Լոքոմոթիւ Մոսկուա (Ռուսիա)։

ԱՆՏՐԻՃ ՎԵՐՍՏԻՆ
ՊԱՇՏՈՆԻ
ԿԱՆՉՈՒԱԾ

Թրանսիր Ռոպըրգի վերերան մարզիչ-մարզիկ՝ Ժոն Ալտրիճ վերստին պաշտօնի կանչուեցաւ իր երկրին ազգային խումբին կողմէ, յառաջիկայ 9 Հոկտեմբերին, Մակեդոնիոյ դէմ մրցումին, Տապիհի մէջ։

38 տարեկան Ալտրիճ 69րդ անգամ ըլլալով պիտի կրէ ազգային խումբին շապիկը։ Ան ճշանակած է 19 կոլ։ Նշենք, թէ կոլ ճշանակելու մրցանիշը կը պատկանի Ֆրէնք Սթիվըրթընի (20 կոլ)։

Խումբէն պիտի բացակայի Մանչեսթըր Եունայթըտի միջնապահը՝ Ռոյ Քինը, վիրատուութեամբ ըլլալուն պատճառով։ Ան պիտի փոխարինուի Լիվըրքուլի Մաքթիթընով։

Ասթոն Վիլայի վերերան յետսապահ Փոլ Մաքկրաթ դարձեալ նկատի չէ առնուած։

Մարզիչ Միք Մաքթիթընի կազմն է.

Բերդապահներ. — Էլըն Քելի (Շեֆիլտ Եուն.), Շէյ Կիվըն (Պիւլքըրըն)։

Յետսապահներ. — Տենիս Իրոնի (Մանչ. Եուն.), Ֆիլ Պոպ (Լիվըրքուլ), Մէք Քեննա (Պիւլքըրըն), Քրոքիս Ֆլէմինկ (Միտլդալոո), Կէրի Պրիս (Պրիմհեմ), Իան Հարթ (Լիք), Քենի Քանինկհէմ (Ուիմպլըտըն), Սթիւ Սթաուըրթն (Ա. Վիլա)։

Միջնապահներ. — Էնտի Թաունզընտ (Ա. Վիլա), Ռէյ Հաուըրն (Ք. Փէլէյս), Էլըն Մաքլոքըն (Փորթսմութ), Մէյսըն Մաքթիթ (Լիվըրքուլ)։

Յուսապահներ. — Էլըն Մոյր (Միտլդալոո), Քիթ Օնիլ (Նորիչ), Ժոն Ալտրիճ (Թրանսիր), Թոնի Քաքարին (Մարսէյ) եւ Տէյվ Քելի (Սանտըրլէնտ)։

ԷՆՏՐԹԸՆ ԴԱՐՉԵԱԼ
ՎԻՐԱՒՈՐ

Անգլիացի միջազգային յառաջապահ Տէրրն Էնտրթըն յառաջիկայ շաբաթ վիրատուութեան պիտի ենթարկուի։ Ան պիտի չկարենայ մասնակցիլ Լեհաստանի դէմ Մոնտիալի գտումի մրցումին, 9 Հոկտեմբերին։

Անցեալ տարի, ան քանի մը մրցում կատարեց Թոթենհեմի հետ, իսկ «Եւրո 96»ի օրերուն, մասնակցեցաւ

հինգ մրցումներուն։ Քանի մը ամիս առաջ, ան բացակայած էր Մոյտալիոյ դէմ մրցումէն։

ՊԱՉԻԼԻՈՅ ՎՈԼԻՊՈԼԻ
ԱՂԶԱՆՑ ԽՈՒՄԲԸ
ՎՐԵԺ ԿԸ ԼՈՒԹԵ

Պրագիլիոյ վոլիպոլի Քուպացիք աշխարհի եւ աղջկանց խումբը վրէժ լուծեց Քուպայի խումբէն, երբ աշխարհի ախոյեանութեան բացման մրցումին, Շանհայի մէջ, պարտութեան մատնեց զայն 15-7, 15-9, 9-15, 7-15 եւ 15-10 արդիւնքով։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ՀԱՐԱԿԱՅԻՆ ԱՓՐԻԿԵՑԻ ՇՈՆ Տանտի Էթ-Իթի մը իրազործեց, երբ Քարլսրուհէ 5-2 արդիւնքով խորտակեց Արմինիա Պիլիֆիլտը, Գերմանիոյ ախոյեանութեան գծով մրցումի մը։ Քարլսրուհէ, որ 2 օր առաջ Ռափիտ Վիեննան պարտութեան մատնած էր ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի մրցաշարքին, այս եղանակի իր ամենամեծ յաղթանակը կ'արձանագրէր։ Միւս կողմը նշանակեցին Մարթ Քելըր եւ Մարքս Երոթ։

●ՄՈՆՏԻԱԼԻ գտումի մրցումներուն ծիրին մէջ, Քաթար 6-0 արդիւնքով պարտութեան մատնեց Հնդկաստանը։ Ասիոյ 10րդ խմբակի այս մրցումի իւրաքանչիւր կիսախաղին, քաթարցիք 3ակն կոլ նշանակեցին։ Տոհայի մէջ տեղի ունեցած մրցումին, 6 կոլերը ունեին միայն 2500 հանդիսատեսներ։

●ՉՈՒԹՅԵՐԻՈՅ Թեմիսի մրցաշարքի կիսաւարտականին, Եւզբենի Քաֆէյիթով յաղթեց Մարթ Քէյօլըրի եւ աւարտականին պիտի ճակատի Հենտրիք Տրիքմանի դէմ, որ կիսաւարտականի միւս մրցումին յաղթեց Փեթր Քորտալի։

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.

✦ ՍԵԹԸԼԱՅԹ ՌԻՍԻՎԸՐ ✦ ՎԻՏԵՕ ✦ ԶԱՄԵՐԱ ✦ ՈՒՍԻՕ-ԶԱՍԵԹ	✦ ԷՐ-ՔՈՆՏԻՍԻՈՆ ✦ ԼՈՒՍԻՔԻՄԵՔԵՆԱՅ ✦ ԿԱՅՈՒՓՈՒՌ ✦ ՍԱՅՔՐՈՒՄԵՅՎ ՓՈՒՌԵՐ
---	--

ԵՒ ԵԼԵԿՏՐ ՏՆԱՅԻՆ ՊԵՏՈՅԻՆԵՐ

Պոլճ Համուտ — Զապապաշտարանի հրապարակ, հեռ. 261270, 268432, 581011, 583218, FAX 583219
Զոյ մուտք, Սանթր Պլանդընէն: Կառատունը ապահովուած:

ԼԱՏԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԵՐ-ԲԱԺԱԿ

ԻՆՏԵՓԵՆՏԻԵՆԹԷ
ԴՈՒՐՍ ՄՆԱՅ

Տիտղոսակիր Ինտեփենտիէնթէ դուրս մնաց Լատին Ամերիկայի այս բաժակի մրցաշարքէն, պարտուելէ ետք Պրապիլիոյ Ֆլամենկոյէն, 1 — 0 արդիւնքով։ Մարպիչ Սեսար Լուիս Մենոթիի հետ, Ինտեփենտիէնթէ կրեց իր առաջին պարտութիւնը։

39րդ վարկեանին, միջնապահ Ֆապիո Պալանսո նշանակեց Ֆլամենկոյի կոլը։ Պեպերօ քանի մը առիթներ կորսնցուց։

Նշենք, թէ Ինտեփենտիէնթէ կը գրաւէ իր երկրի ախոյեանութեան այժմու առաջին դիրքը։

Միւս կողմէ, եւ հակառակ բազմաթիւ պահեստի մարպիկներ ունենալով, Պրա ժուիորպ 3 — 0 արդիւնքով պարտութեան մատնեց Արխենթիսո ժուիորպը։ Սիլվիո Քառարիօ, Կապրիէլ Սետրէս եւ Սերճիո Մարթինէս նշանակեցին երեք կոլերը, 61րդ, 64րդ եւ 86րդ վայրկեաններուն։

Նշենք, թէ այս մրցաշարքին կը մասնակցին Լիպերթաուոր բաժակը շահած խումբերը։ Արխենթիսո ժուիորպ այժմ մաս կը կապէ Բ. դասակարգին, սակայն իրաւունք ունի մասնակցելու այս մրցաշարքին։

ՇԻՄԻԶՈՒ ՇԱՀԵՑԱԻ
ՃԱՓՈՆԻ ԲԱԺԱԿԸ

Արժանթինի ազգային խումբին նախկին աստղերէն՝ Օսվալտո Արտիլէս դարձեալ կը փայլի մարզիչի դերով։ Ան չահեցաւ Ճափոնի բաժակը, իր կազմին՝ Շիմիզու Էս-Փալսիօ հետ. փենալթիներով պարտութեան մատնելէ ետք վերտի Քաուզապին (5 — 4)։ Մրցումը աւարտած էր 3 — 3 արդիւնքով։

Քաուզապիի պրագիլիացի յառաջապահ Մակտոնը չկրցաւ նպատակին հասցնել փենալթին։ Շիմիզուի համակիրները ուրախութեամբ տօնեցին իրենց կազմին յաղթանակը։

Պրագիլիացի Պիզմարք նշանակած էր Քաուզապիի երեք կոլերը, իսկ Վազեկաուա, նախկին արժանթինցի Օլիվա՝ Շիմիզուի կոլերը։

Electronic Door Entry

The external panel for the CITY LINE ELECTRONIC DOOR ENTRY has a 2 YEAR WARRANTY. Taking the robustness and durability into account, the LED push button for illumination on name plates, metal push buttons and exceptional design. The panels can incorporate a panoramic name window to identify the building and a Memory keypad to open the door by means of a secret code.

VIDEO DOOR ENTRY telephones and monitors

The FERMAX ELECTRONIC DOOR ENTRY SYSTEM allows for standby power supply guaranteeing more than 500 operations and door opening. The standby power supply has a rapid recharge system.

ACCESSORIES

G. Ayanian & Sons

Տոքա, Հեռ. 884914 — 403123 (միացեալ գիծեր)
Ժամկէտ, Հեռ. 446398/098 Ֆաքս. 286187/582367

Specialists in communications since 1949

ՄԱՀԱԶԴ

Տիկին Մարի, օր. Արուսեակ եւ պր. Սարգիս Սիւփրիկէճեան
Տէր եւ տիկին Առաքել Սիւփրիկէճեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Յարութ եւ Այտա Պարոնեան եւ դուստր
Տէր եւ տիկին Հայկ եւ Նորա Յովհաննէսեան եւ զաւակը
Տէր եւ տիկին Յարութ եւ Լենա Մետրոպեաններ եւ զաւակուք
Տէր եւ տիկին Տրդատ եւ Էլօ Տալտէ վիրենեան եւ զաւակուք
Պր. Մանուկ, օր. Լուսանուշ եւ օր. Վեհանուշ Մարգէան եւ համայն ազգականներ կրգուեան իրենց հարազատին։

ԱԼԻՍ ՍԻՓԻՐԻԿԷՃԵԱՆԻ
(Մեկալ՝ 1925ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 28 Սեպտեմբեր 1996, գիշերուան ժամը 8-30ին, սրտի տագնապի հետեւանքով։ Յուրաքանչիւր տարուան ընթացքին տեղի ունեցաւ Ուրբաթ, 27 Սեպտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11ին, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը։

●Ներկայս ընդունիլ իրրէ մահալը։

●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին եղորք ընակարանը, Մար Եուսէֆ հիւանդանոցին դիմաց, Մար Մուսա շէնք, Տոյ յարկ։



Մարզական



Մարզական



«ԱՄՅԱՐՈՅ» ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱԸՆԱՐՁ

ՆԵՐՄԵ - ԱՆՍԱՐ 1-0

Երեկ, Թրիփոլի մէջ տեղի ունեցաւ «Այսպոյ» ըրաճակի մրցաշարի աւարտական մրցումը, ուր Ներմէ 1-0 արդիւնքով յաղթելէ ետք ախոյան եւ ըրաճակակիր Անսարին, չանցեալ մրցաշարքին ըրաճակը:

Մրցումը եղաւ միջակ մակարդակի, բայց Ներմէ հակառակ իրադրութիւններուն կողմնակցութեան, կրցաւ հետգհետէ ըրաճակակիր իր յաղաղութիւնը եւ յաճախ փոխանցեց Անսարի ըրեղը:

Բ. կիսախաղի կէսերուն, Աճմէտ Պուրա դաշտ ներկայանալէն 4 վայրկեան ետք, նշանակեց Ներմէի եւ մրցումին միակ կողմը, իր մեծաթիւ համակիրներուն մեծ ուրախութիւն պատճառելով:

Նկատելի էր, որ այս մրցաշարքին, Անսարի մարզիկներուն յառաջացած տարիքը եւ համեմատաբար «հին» ֆուլթայլի խաղաոճը այլեւս խոցելի է եւ այս տարուան ախոյանութիւնը «բաց» կրնայ ըլլալ, մասնաւոր զի տեղիէ ետք Ներմէի, Սաֆայի եւ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայլի գարգացած խաղաձեւը:

Այս մրցաշարքին, Ներմէ ստացաւ 20 հազար ամ. տոլար, Անսար՝ 12 հազար ամ. տոլար, Հ.Մ.Ը.Մ. եւ Սաֆա 8 հազարական ամ. տոլար, Պրոք եւ Թատամոն Սուր՝ 4 հազարական ամ. տոլար:

Նշենք, թէ Թատամոն Սուր ստացաւ նաեւ մրցաշարքի «մաքուր խումբ» տիտղոսը:

ԼԻԿԵՐՓՈՒԼ ԵՒ ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՌԻՆ. ՅԱՂԹԱԿԱՆ

Շարաթափերէն տեղի ունեցաւ Անգլիոյ ախոյանութեան 8րդ հանգրուանի մրցումները:

Պարագլուխի դիրքը գրաւող Լիվերքուլ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Ուէսթ Համը, այս վերջինին դաշտին վրայ եւ 3 կէտի առաւելութիւն մը ունեցաւ իր անմիջական մրցակցին՝ Արսենալին վրայ, որ կրնայ 3րդ դիրքի իջնել, եթէ այսօր Նիւֆսըլ պարտութեան մատնէ Ասթոն Վիլան:

Լիվերքուլի աստղը անգամ մը եւս չեփ փաթիլք Պերկլըն էր, թէ եւ ան կողմնակցեց: Սթէն Քոլիմոր եւ Մայքըլ Թոմաս նշանակեցին Լիվերքուլի կողմը, իսկ խրուաթ Պիլիք նշանակեց Ուէսթ Համի կողմը:

Մանչեսթըր Եունայթըտ

2-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց Թոթեմհեմ իրա, շնորհիւ նոր վեկիացի իր աստղին՝ Օլէ Կիւնար սոյսփիարին, որ առաջին մը ըրաւ: Սոյսփիար ալ մէկտեղուի կրցարաւ կողմնակցութեան ցանկին Բ. դիրքը:

Արսենալ, 2-0 արդիւնքով դժուարութեամբ պարտութեան մատնեց Սանտորիլանտը, որ մրցումը արաւտեց Ֆուլթայլի: Մրցումին իրաւարար Ա. կիսախաղին 2 մարգիկներ փոխեց դաշտէն, ոչ ծանր յանցանքներէ ետք: Անոնց հետ փոխուեցաւ նաեւ մարգիլ Փիթըր Ռիտ:

Հակառակ այս բոլորին, Արսենալ միայն 73րդ վայրկեանին կրցարաւ մրցումին հաշիւը, շնորհիւ ծոն Հաթսըրին, իսկ Ռէյ Փարլը 88րդ վայրկեանին նշանակեց 2րդ կողմը:

Ձեյսի 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Նոթիքնհեմ Ֆորթսին հետ: Իտալացի ծիանուաք Վիալլի մէկ վայրկեանին նշանակեց Ձեյսիի կողմը, բայց Ֆորթսի վերջին վայրկեանին հաւասարեցաւ շնորհիւ ծէյսըն Լիի կողմը:

Ուլմպիոնը, որ ախոյանութիւնը շատ փառ ձեւով սկսած էր, Յաջորդական պարտութիւններով, արձանագրեց յաջորդական իր 5րդ յաղթանակը: Ռուպի Էրլ եւ Մարքոս Կէյ նշանակեցին Ուլմպիոնը կողմը: Անգլիոյ ազգային խումբի նոր անդամներէն՝ Մէլիս Լե Ռիսի, երկու կողմէն նշանակեց, երբ իր կազմը՝ Սաութհեմթըն 4-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Միտլքոպոն:

ԿՊՈՒԶՈՒԻ

Հաստատութեան մը համար համակարգիչի վրայ աշխատող հաշուապահին մը, 5 տարուան փորձառութեամբ: Հեռ. 262650 եւ 448652:

(ՌԵՕՐԵՐ)

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԷ

Տիկին Հուրի Նիկոնուան է դուստրը՝ Մարիամ, տէր է տիկին Զեյնուր Զալլաւան 22 յոյնականութիւն կը յայտնեն բոլոր ահոյանը, որոնք ահմամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ մասնակցեցեալ իրենց ամուսնացեալ ամուսնուհի, հօր, եղբոր եւ հարազատին՝ ԴԱՆԻԷԼ ՆԻԿՈՆՈՒՍԵԱՆԻ ՄԱՐԿԱՆՍԻՆԻ:

ԾԱԽՈՒ ՏԸԼԻԻՔՍ

ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Փէլ Էլ Տիպի մէջ, Հարպիւն 2269, BLՕC A, 210 քառ. մէթր տարածութիւն: Օժտուած՝ էր-քոն-տիսիոնով, ջեռոցիով, ժեմ-նորաբոլով, վերելակով եւ կառավարմանով: Հեռ. 03-269091:

ԿՊՈՒԶՈՒԻ

Ոսկերչատան մը համար մոմի վրայ աշխատող օրինորդ մը: Դիմել՝ ահմամբ, Սաքոբ Երիշան, 4րդ յարկ, թի 10:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Նախակրթարանի եւ երկրորդական դասարաններու համար: Հեռ. 583713:

Սաութհեմթըն իր աստղին յաղթանակէն էր, որուն պատճառով խումբը բարձրացաւ 18րդ դիրքին: Ստորեւ, 8րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Ուլմպիոն 2-0 Սաութհեմթըն Եուն. - Թոթեմհեմ 2-0 Արսենալ - Սաութհեմթըն 2-0 Չելսի - Նորիքհեմ 1-1 Գոլինգ 0-0 Տերսի - Ուլմպիոն 0-2 Էվըրթըն - Շելֆիլ 0-2 Լալսթը - Լիք 1-0 Տերսի - Ուլմպիոն 4-0 Նիքսթը - Ասթոն Վիլա (այսօր):

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

	ԿԵՏ
1. Լիվերքուլ	20 (18-6)
2. Արսենալ	17 (17-8)
3. Մանչեսթըր Եուն.	16 (18-6)
4. Ուլմպիոն	15 (12-7)
5. Նիքսթը	15 (10-12)
18. Սաութհեմթըն	5 (10-12)
19. Քոլինգ	5 (3-13)
20. Պլեյքը	3 (5-11)

ԳԵՐԱՆԻՒՄ

Գերմանիոյ ֆուլթայլի ախոյանութեան 8րդ հանգրուանին, պարագլուխի դիրքը գրաւող Պայերն Գոլոս մնացած էր Եուն. Է. Բ. Ա. ի մրցաշարքին, շարունակեց իր յաջողութիւնները եւ ոչ-միայն կորսնցուց Ա. դիրքը, այլ իջաւ Գ. դիրքի, պարտութեան վերջին Պրեմիէր Լիգին:

ԱԶԱՏԻԿ ՀԵՐԿԵԼԵԱՆ ԸՆԴ ԺԱՆ ՊԱԼՃԵԱՆ ԽՍՈՆԵԳԱՅԸ

Այնճար, Շարաթ, 28 Սեպտեմբեր 1996

ԼԻԲԱՆԱՆԻ ՍՈՒՐԻՈՅ ՍԵՉ

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Ե ԱՐԴԵՆ

ԴԻՏԱԿ-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԹԻՒԸ

● Ամէն չայ ընտանիքի անհրաժեշտ գեր-շքեղ միջազգային անագիրը
● Այժմեական եւ հետաքրքրական նիւթեր
● Ամուսնային նուէրը՝ ՅԱՐՈՒԹ ՓԱՄՊՈՒՔԸԱՆԻ Poster:
Հեռ. Պէլլուր՝ 01-320871, 01-405170, 03-238887 եւ 03-368478:
● Սուրիոյ մէջ ստանալու համար, դիմել Սուրիոյ ներկայացուցիչ ԳՐԱՏՈՒՆ ԿԻԼԻԿԻԱՆ, Հալեպ, հեռ. 442339 եւ 642339:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Արրահամ Թաշճեան եւ գաւակունք Տէր եւ տիկին Գրիգոր Թաշճեան եւ գաւակունք Տիրա Վարդգէս Թաշճեան Տիկին Մարի Թաշճեան եւ դուստրը՝ Տիգրանուհի Տէր եւ տիկին Արմէն Նալպանտեան եւ գաւակունք Տէր եւ տիկին Յովհաննէս Մարտիկեան եւ գաւակունք Տէր եւ տիկին Կարապետ եւ Զարուհի Պետրեան եւ գաւակունք եւ համայն ազգականներ կը գլուխներ իրենց հօր, աներոջ, հօրեղոր, քեռայրին եւ հարազատին:

ԴԱԻԻԹ ԹԱՇՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շարաթ, 28 Սեպտեմբեր 1996, երկուշաբթի, Նիւ Եորքի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուդարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Նիւ Եորքի մէջ:

● Ներկայս ընդունիլ իրել մահադի:
● Յաւակցութիւններ կ'ընդունուին Արրահամ Թաշճեանի քնակարանը, Կրէնտ Փարք, 2րդ շէնք, 3րդ յարկ, Զալլա, Երկուշաբթի 30 Սեպտեմբեր, Երեքշաբթի 1 եւ Զորեքշաբթի 2 Հոկտեմբերին, հեռ. 898173:

Պայերն, որ տարի մը առնելէ ետք Հերցոլդ, գալն նակեց Եթեֆան Ռէսթըրի վեկ փոխանցումէն ետք (52րդ վայրկեանին):

74րդ վայրկեանին, Անտրի Թոթեմհեմ նշանակեց կողմը ի նպաստ մը՝ սկսած էր, երբ Հերցոլդ յայտնած էր, թէ վրէժ պիտի լուծէ իր «անհանգիստ» տարեշրջանին համար (Պայերն համար), մինչ Պայերն Պրեմիէր մարգիլ Տիգրսի Տէրսիին ըսած էր, թէ Պրեմիէր անպայման պիտի ունի իրեն՝ Պայերնի, որ պէտք կ'ընդունար մրցիլ Ա. դիրքին համար:

Ըստ Երեւոյթին, Հերցոլդ իրաւացի էր, որովհետեւ ան նշանակեց 2 կողմ, մինչդեռ Պայերն (Քլինսմանի հետ միասին) միայն Ա. կիսախաղին դաշտ ներկայացաւ, ծախող մրցումէ մը ետք: Պրեմիէր 3րդ կողմը նշանակեց Պայերնի նախկին մարգիլներէն Պրուսո Լապատիա:

Ա. դիրքը գրաւող Շթուլկարթ, որ օգտուեցաւ Պայերնի պարտութեան եւ Միւնիխ Ողիմպիական դաշտին վրայ, 5-2 արդիւնքով պարտութեան մատնեց 1850 Միւնիխը: Պայերնի ծիովանի էլ-պէր (2), Միւնիխ Հակնըր, խուրախ Զփոնիմի Սոլուս եւ Ֆրէյի Պայերն նշանակեցին Շթուլկարթի 5 կողմը:

Բ. դիրքը գրաւեց Պայերն Լեւերքուլը, որ 2-1 արդիւնքով յաղթանակ վերադարձաւ Շալֆի դաշտին: Տր Քոք 2րդ վայրկեանին նշանակած էր Շալֆի կողմը, բայց Մէյլը եւ

պարգիլայի Սերժիոյ յաջորդ 22 վայրկեաններուն նշանակեցին Լեւերքուլը իր կողմը:

Անցեալ տարուան ախոյան Պրուսիա Տորթ-մունտ «տաք» մրցումի մը ընթացքին 2-1 արդիւնքով դժուարութեան մատնեց Պայերնը, որ վերջ գտաւ 2-2 արդիւնքով: Ռայ (փն-նալլիոն) եւ Լէոնարտս փոխադարձեցին Քատուիլի եւ Ռուքսի կողմը:

Այս ձեւով առաջին 4 դիրքերը գրաւող խումբեր իրենց մրցումները հաւասարութեամբ արտոնեցին:

Պայերն 2-2 արդիւնքով հաւասարութեան մարձանագրեց Նանսիի հետ: Տորպիաք եւ Մորալէի Մէյլը գերեցիկ ազատ հաղթանակներով իրենց հաւասարութեան Նանսի կողմը:

Պրուսո եւ Ժան Փիեռ Փալէն չկրցան կողմը նշանակել Մարտիլի զէմ մը: Գուստ Լուսարտեան ձեռքով, իրաւ, բայց Տորթմունտ

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սոսի Ապուհանեան եւ գաւակունքը՝ Յամիկ, Արփի եւ Թովմաս

Տիկին Արփիին ժուլֆայեան Տէր եւ տիկին Յովհաննէս Տէր իրենց եւ գաւակունք Տէր եւ տիկին Յակոբ Կոստանեան եւ գաւակունք Տէր եւ տիկին Արար Լուսարտեան եւ գաւակունք Տէր եւ տիկին Գրիգոր Տէր իրենց եւ գաւակունք Տէր եւ տիկին Էմմա Ապետի եւ գաւակունք եւ համայն ազգականներ կը գլուխներ իրենց ամուսնուն, հօր, փեսային, եղբոր, քեռայրին եւ հարազատին:


ԳՐԻԳՈՐ ԹՈՎՄԱՍ ԱՊՈՒՀԱՆԵԱՆԻ (Ծնեալ՝ 1949ին)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Շարաթ, 28 Սեպտեմբեր 1996, կէսօրէ ետք ժամը 3ին:

Թաշճեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 29 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսարտիչ Մայր Տաճարին մէջ, ուրկէ հանդիսացան մարմին փոխադրուեցաւ Պրուս Լապատիա գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իրել մահադի:
● Յաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեալին քնակարանը, Պրուս Լուսարտեան, Երեքշաբթի 1 եւ Զորեքշաբթի 2 Հոկտեմբերին:

ԶԼԻՆԹԸՆ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ...



տուաւ, որ անցնող շարժումներէն իրադարձութիւն մըն է իսրայէլացի եւ պաղեստինցի ժողովուրդներուն համար, ինչպէս նաեւ հարուած մը բոլոր անոնց, որոնք կ'աշխատին միայն իսրայէլականութեան մը համար: Քիլիմիւն աւելցուց, որ իր կարելին պիտի ունի օգնելու համար պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն, որպէսզի վաղորդութեան ախիք մարի եւ իսրայէլական գործընթացը վերսկսի:

Հիւսէյն Թապաւուր փութեց Կապաթալըն, որ այսօր Ուաշինգթոնի պիտի երթայ, մասնակցելու համարաւարտուած գերատնտեսներին: Խորալէյն հաղորդուեցաւ, որ նախագահ Մուպարաբի մասնակցութիւնը պայմանաւորաբար չի վերջին դէպքերուն կամ տուող ծանօթ փապուղիին փակումէն:

ԲԱՍՈՒՄՆԵՐ

Հակառակ անոր, որ պաղեստինեան շրջանները համեմատաբար աւելի խաղաղ շարաթափեր մը ունեցան, սակայն Երուսաղէմի փապուղիին հարցին պատճառով կարգ մը վայրերու մէջ շարունակուեցան բախումները, ՅՅի բարձրացուց զոհերուն թիւը: 55 պաղեստինցի եւ 14 իսրայէլացի զոհուին:

Իսրայէլեան բանակը յայտնեց, որ Շարաթ օր պաղեստինցի մը սպանած է Կապաթալ մէջ, երբ ցուցարարներ նա Շուէնսէն ելելով վրայաւարտեցին իր փապուղիին: Իսրայէլեան բանակին կեղծութիւնը: Զեռնաուում մը կրող պաղեստինցի մը սպանուած է:

Երուսաղէմի մէջ, պաղեստինցիներ շարունակեցին քարկոծել իսրայէլացի զինուորները, յատկապէս երէկ, երբ վերադարձան փապուղիին: Իսկ պաղեստինեան այլ շրջաններու մէջ, ըստ ակնադատներուն, խաղաղ ցուցարարներ իսրայէլեան զինուորները տեղի ունեցած են: Շարաթ գիւրջ Նեթա-նիաճու յայտարարած էր, որ փապուղիին պիտի չփակուի:

Արաֆաթ յայտարարեց էր, որ Իսրայէլ հրահրեց բախումները՝ փապուղիին բանալով: Ան զիտել տուաւ, որ պաղեստինեան ցատումը պիտի մեղմանայ եւ ի վերջոյ պիտի մարի, եթէ Իսրայէլ փակէ վիճի առարկայ փապուղիին, որ կ'անցնի Երուսաղէմի իսլամական սրբավայրերուն տակէն: Իր խօսքին մէջ,

Արաֆաթ հերքեց այն ամբաստանութիւնը, թէ պաղեստինեան ոստիկանութիւնը հրահրեց ստացած է կրակ բանալու իսրայէլացի զինուորներուն վրայ: Ան չեւտեց, որ պաղեստինցի ոստիկանները կրակ րաջին այն ատեն, երբ պաղեստինցիները փախուցանուած է եւ ինքնապաշտպանութեան դիմեցին:

Նեթաֆիհանի մէջ օգնականը երէկ առաջարկեց զինութեալ ընել պաղեստինեան ոստիկանութիւնը, որպէսզի կրակ չբանայ իսրայէլացի զինուորներուն դէմ:

Արաֆաթի խորհրդատու Նեպիլ Ապու Ռաշադ հակադարձեց, զիտել տալով, որ կարելի չէ զինութեալ ընել պաղեստինցի ոստիկանները, որովհետեւ անոնց զինումը որոշուած է Իսրայէլի հետ ստորագրուած համաձայնագիրով մը:

ՈՒԱՇԱԼԻ ԱՆՅԱՐԳԵԼԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Պաղեստինեան ոստիկանութիւնը Շարաթ օր իսրայէլեան բանակին վերադարձուց Կապաթալ եւ Երուսաղէմի մէջ գտնուող սահմանային անցքը, որ գրաւուած էր Ուրաթ օր:

Պաղեստինցի ցուցարարներ յարձակած էին Ռաֆահի մօտակայ անցքի վրայ վրայ եւ իսրայէլական ուժերուն հետ: Անոնք սպաննած էին գնդապետ մը, վիրաւորած չորս զինեալներ եւ ապա՝ պաղեստինեան դրոշակը բարձրացուցած հին: Իսրայէլեան ուղղաթիւներ ամբողջ օրը փորձած էին վերադարձել դիրքը, սակայն չէին յաջողած:

ԱՐԶԱՎԱՐԳՆԵՐ

● ԴԱՄԱՍԿՈՍԻ մէջ, արմատական պաղեստինեան շարժումներ բողոքի ցույց մը կազմակերպեցին երէկ, գաղթականային մը մէջ: Հազարաւոր պաղեստինցիներ մասնակցեցան Երուսաղէմ գաղթականային ցույցին:

● ՅՈՎՀԱՆՆԵՍ Պօղոս Բ. Պապը յայտարարեց, որ կ'աղօթի Միջին Արեւելքի խաղաղութեան համար եւ կ'ոչ կ'ուղղէ պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն, որպէսզի նոր բախումներ չհրահրեն:

● ՄԱԿԻ Ապահովութեան խորհուրդի 15 անդամներ ընէ միայն Միացեալ Նահանգները ձեռնպահ մնալուն որոշումը մը գծով, որ կը պահանջէ պաղեստինցի քաղաքայիններուն ապահովութիւնը ու պաշտպանութիւնը, ինչպէս նաեւ կ'ոչ կ'ուղղէ Միջին Արեւելքի խաղաղութեան գործըն-

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԶԻՐԴ ԴԱՐՈՒՆ

Արեւմտեան եւրոպացի ղեկավարներ յառաջիկայ շաբաթավերջին Տապիւնի մէջ ժողով մը պիտի գումարեն, խմբակը պատրաստելու համար 21րդ դարուն: Անոնք պիտի քննարկեն եւրոպական Միութեան ապագան եւ շեշտը պիտի դնեն մասնաւոր եւրոպական Միութեան նոր դաշնագիրի մը շուրջ բանակցութեանց արագացման վրայ:

Գլխաւոր հարցը միջ-կառավարական խորհրդաժողովին մասին յառաջդրութիւնն է: Անոր նպատակն է բարեփոխումն ենթարկել եւրոպական Միութեան դաշնագիրը, այնպիսի ձեւով, որ անկապ պատշաճի նոր անդամներ ընդունող պոքին:

Եւրոպական Միութիւնը 12 երկիրներու (էսթոնիայէն մինչեւ Արեւելեան եւրոպա եւ Մալթա) ըսած է, թէ ի վերջոյ կրնան անդամ դառնալ: Անդամակցութեան մասին պաշտօնական բանակցութիւնները պիտի սկսին միջ-կառավարական խորհրդաժողովին աւարտէն 6 ամիս ետք:

ԵՕԹՆԵՐԸ ՀՏԱԼՔԻՔՐՈՒՄԸ

Ճարտարարուեստի Եթեզեւտէ աւելի կը հետաքրքրուին 1999-ին միացեալ դրամանիշ մը հաստատելու եւրոպայի ծրագրներով եւ անոնք կ'ուզեն, որ նոր դրամանիշը նոյնքան կայուն լոյս, որքան գերմանական մարքը: Այս կեցուածքը ի յայտ եկաւ շաբաթավերջին, Եթեզեւտէ երկրներու նախարարներուն Ուաշինկթոնի ժողովէն ետք:

Միւս կողմէ, Բրիտանիոյ ելեմուտքի նախարար Քենէթ Բլաքը երէկ ըսաւ, թէ իր կարծիքով, եւրոպական միացեալ դրամանիշը պիտի հաստատուի նոյնիսկ եթէ անկապ նախատեսուած թուականը՝ Յունուար 1999 չյարգէ:

(ՌԷՕԹԸՐ)

ՏՈՒՀԸ ՀԵՏԱՊՆԴԻ ԲԼԻՆԹԸՆԸ

Միացեալ Նահանգներու մէջ Շարաթ օր լոյս տեսած հարցախոյզի մը արդիւնքները ցոյց տուին, թէ նախագահութեան գլխաւոր թեկնածուներուն՝ հանրապետական Պոպ Տոյի եւ դեմոկրատ նախագահ Պիլ Բլինթոնի միջեւ կէտերու տարբերութիւնը ինչո՞ք է 9 առ հարիւր: Տոյի գորակցութիւնը արտայայտած են հարցապնդուողներուն 33) առ հարիւր, Բլինթոնի՝ 48 առ հարիւր: Թեքսասի միլիտանտէր Ռոս Փէրսօն առ հարիւր արագահոված է:

Այլ հարցախոյզ մը սակայն ցոյց կու տայ, որ Բլինթոն քուէներու 52 առ հարիւրը ապահոված է, իսկ Տոյ՝ 37 առ հարիւրը:

Միւս կողմէ, Բլինթոն Շարաթ գիշեր Պոսթրին մէջ ներկայ եղաւ երգահանդէսի մը, ուր 60ականներու եւ 70ականներու աստղեր «Հին երգեր» երգեցին ու մէկ միլիոն տոյար գոյացուցին:

(ՌԷՕԹԸՐ)

ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ ԻՐԱՆՏԱՅԻ ԳԾՈՎ ՈՉ-ՔԱԶԱԼԵՐԱԿԱՆ ՄԹՆՈՒՆՈՒՄ

ՊԵՒՅԱՍԻ, 29 (ՌԷՕԹԸՐ) - Հիւսիսային Իրանտայի խաղաղութեան բանակցութիւնները Երկուշաբթի օր (այսօր) պիտի վերսկսին Պեյֆասթի մէջ, ոչ-քաջայեղական միջոցառումի մը մէջ:

Շարաթավերջին, Իրանտայի մօտ Միացեալ Նահանգներու դեսպանը մտահոգութիւն արտայայտած է քաղաքական եւ ընկերային հետզհետէ աւելի վատթարացող կացութեան մասին:

Անցեալ շաբաթ, Լոնտոնի մէջ ԻՐԱՆ պատկանող ականներու պատրաստութեան գործարանի մը յայտնաբերումը լուսարձակները դարձուց այն տուեալին վրայ, թէ ԻՐԱՆ քաղաքական թեմէ՝ Շին Ֆէյ ընդհանրապէս կը մնայ բանակցութիւններէն: Բրիտանական եւ իրանական կառավարութիւնը կը մերժեն արտօնել Շին Ֆէյնի մասնակցութիւնը, պահանջելով, որ ԻՐԱՆ նոր գլխաւոր մը չուզակէ: Այս վերջինը կը մերժէ գէնքերը կար դնել, այն մտաւարութեամբ, որ իր բողոքական մրցակիցները բանակցութիւնները պիտի օգտագործեն ընդհանուր գէնքերու յանձնումը պարտադրելու փորձ կատարելու համար:

Միւս կողմէ, ապահովութեան աղբիւրները կիրակի օր յայտնեցին, թէ անցեալ շաբաթ ոստիկանութեան կողմէ սպաննուած ԻՐԱՆի մէկ անդամը կը ծրագրէր Բրիտանիան Ֆրանսայի կապող փապուղին խաւարի մօտեմ, անոր ելեկտրական հոսանք հայթայթող կայանը ակա-նահարելով:

ՏԸՓԱՐՏԻԷՕ ՓՐԿՈՒԱԾ

ՄԱՏՐԻՏ, 28 (ՌԷՕԹԸՐ) - Ֆրանսայի դերասան Ժերար Տըֆարսիտէ մահէ փրկուած է, երբ զինք փոխադրող փոքր օդանաւ մը Ուրբաթ գիշեր բախած է «Պոլիսկ 72»-ի մը, Մատրիտի օդակայանին մէջ:

Տըֆարսիտէ փոխադրող օդանաւը ծանր վնասներ կրած է: Բարեբախտաբար երկու օդանաւներուն մէջ ալ զոհեր եւ վիրաւորներ չեն արձանագրուած: Դերասանը Մատրիտ հասած էր, յատկերապարհով յայտագիրի մը մասնակցելու համար:

ԱԼ ՊԱՆԱՅԻԸ ԱԼ ՍԿԱՍԾԵՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ

ԹԻՐԱՆԱ, 29 (ՌԷՕԹԸՐ) - Եւրոպայի գեղեցկուհի ընտրութեան հանգիստութիւնը Տաբաթ գիշեր տեղի ունեցաւ: Այլապէս մայրաքաղաք Թիւրքիայի մէջ: Քաղաքին փողոցները ամառային Տաբաթ գիշեր, որովհետեւ ամէն մարդ գամուած էր յատկերապարհուհի դիմաց, հետեւելու համար շքեղ հանգիստութեան: Ստալինականութենէ վերջէն հրաժարող այս երկրին մէջ նման հանգիստութիւն չ'էր եղել...

Գեղեցկուհի մրցանքին կը մասնակցէին եւրոպական 35 երկիրներէ թեկնածուներ, որոնցմէ 23 տարեկան «Միս Ինկլըմ»ը դարձաւ 1996-ի «Միս Եւրոպա»:

ՀԻՒԱՆԴ ԵԼՑԻՆ ՊԵՏԵ Է ՓՈԽԱՆՑԷ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Կ'ԸՄԷ ԱԼԵԽՍԱՆՏՐ ԼԵՊԷՏ

ՄՈՍԿՈՒԱ, 29 (ՌԷՕԹԸՐ) - Ռուսիոյ ապահովութեան պատասխանատու Ալեքսանտր Լեպէտ շաբաթավերջին յայտնեց, թէ նախագահ Պորիս Ելցին իր հիւանդութեան ժամանակ միջոցին պէտք է պաշտօնապէս իշխանութեան փոխանցում կատարէ, վերջ տալու համար այդ հարցին շուրջ անորոշութեան:

Լեպէտ «Մոսկովսկի Կոմսոլ» օրաթերթին յայտնած է, թէ այդ գծով որոշումը Ելցինի կը մնայ, սակայն աւելցուցած է, ան, ներկայ կացութիւնը վտանգ կը սպառնայ ապահովութեան:

Ապահովութեան պետը ըսած է, թէ Ելցին վարչապետ Վլադիմիր Զեւեռնի-տինը ռաժաժանք ղեկավար պէտք է նշանակէ, հակառակ այն շնչներուն, որ 2 պաշտօնատարները, նախագահին բացակայութեան, կը փորձեն իշխանութեան ղեկին տիրանալ:

Կ'անկախուի, որ Ելցին գերագոյն իշխանութիւնը, ներառեալ՝ Ռուսիոյ կորիզային գէնքերուն հակակր-չիւրը, միայն քանի մը ժամուան համար Զեւեռնի-տինի յանձնէ այն ժամերուն, երբ ինք սրտի վիրաբուժական գործողութեան պիտի ենթարկուի:

Նախագահը, որ Յունիսի վերջերէն ի վեր հրապարակելու ելլող չէ ունեցած, Սեպտեմբեր 13էն ի վեր հիւանդանոց կը գրտնուի եւ օրական 24-3 ժամ

ՊԱՅԹՈՒՄ
ԷԲՍ-ԱՆ-ՓՐՈՎԱՆՍԻ
ՄԷՋ

ՄԱՐՏԻՏ, 29 (ՌԷՕԹԸՐ) - Ֆրանսայի հարաւային Էքս-Ան-Փրովանս քաղաքին մէջ, Կիրակի առաւօտ ուսումը մը պայթեցաւ դատական շէնքին առջեւ, նիւթական վնասներ պատճառելով: Մարդկային վնասներ չեն արձանագրուած:

Յստակ չեղաւ, թէ ո՞վ կը կանգնի պայթումին ետին: Նոյն շէնքը 1992ին ծանրօրէն վնասուած էր օդին քրօսիքային անջատողականներ ըսած էին, թէ իրենք կատարած էին գործողութիւնը:

— ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ —

ԱՄԻՈՒԹ - Իսլամական գինեալներ Շարաթ օր երկու ոստիկաններ սպաննեցին հարաւային Եգիպտոսի մէջ, յայտնեցին ապահովութեան աղբիւրները: Միջադէպը տեղի ունեցած է Մանջիա Մադալիքա գիւղին մէջ: Ոստիկանութիւնը կ'ամբաստանէ «Կամաա Խալաֆա»-ի գինեալները:

ՏՈՒՊԱՅ - Արաբական Միացեալ Էմիրութիւններու իշխանը Միացեալ Նահանգներու մէջ վիզին մէկ ողնի վիրաբուժական գործողութեան ենթարկուած է:

ԼՈՆՏՈՆ - Տայանա իշխանութիւն երէկ հեղքեց, թէ քաղաքական նպատակներով իր ելոյթներուն համար (Բրիտանիոյ եւ արտասահմանի մէջ) ճիւղակու հատուցումներ կը ստանայ:

միայն կ'աշխատի: Ան արդէն իսկ Զեւեռնի-տինի ռաժաժարար յանձնած է կարգ մը իրաւաբանութիւններ, ներառեալ պաշտպանութեան եւ ապահովութեան նախարարութիւններ: Համայնավար ղեկավար

Կենտրոն Զիւլեանով պահանջած է, որ Ելցին հրաժարի, մինչ ծայրայեղ ազգայնական ղեկավար Վլադիմիր Ժիրինսկի ըսած է, թէ Կրեմլինէն երկար ժամանակով հեռու մնալու ռուսական աշխատանքային օրէնքը կրնայ բռնաբարել:

ԲՈՂՈՔ՝ ԶԻՐՏ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՄ

ԱՆԳԱՐԱ, 29 (ՌԷՕԹԸՐ) - Քիւրտ երեք բանտարկեալներ հիւանդանոց փոխադրուեցան Կիրակի օր՝ իրենք վիրէք հրկիւելու փորձ մը կատարելէ ետք, իբրեւ բողոք՝ Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան ղեկ, յայտնեցին մարդկային իրաւանց պաշտօնատարներ:

Երեք բանտարկեալները (երկու արեւելիկն մը) թիւը թափած էին իրենց մարմիններուն վրայ եւ ապա կրակի տուած: Անոնց բողոքը Տիարպէթի բանտին մէջ տեղի ունեցող վերջին իրադարձութիւններուն ղեկ էր: Տիարպէթի բանտին խռովութիւնները 11 Կոն էլ քանի մը վիրաւոր պատճառած էին:

ՔՈՒԷՅԹԻ ՄԷՋ ԿԻՆԵՐ ՔՈՒԷԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՆՈՒՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆ

ՔՈՒԷՅԹ, 29 (ՌԷՕԹԸՐ) - Մօտաւորապէս 300 քուէյթցիներ (այդ եւ կին) ցոյց մը կազմակերպեցին Կիրակի օր՝ պահանջելու համար կիններու քաղաքական իրաւունքներուն ճանաչումը: Քուէյթցի կինները ցարդ իրաւունք չունին խորհրդարանի ընտրութիւններուն մասնակցելու:

Ցուցարարները կը պահանջեն, որ կիններն ալ մասնակցին ընտրութիւններուն եւ առնուազն քուէարկելու իրաւունք ստանան, եթէ ոչ թեկնածու դառնալու:

Քուէյթի մէջ Հոկտեմբեր 1-ին տեղի պիտի ունենան յետ-պատերազմեան (1991-ին) խորհրդարանական երկրորդ ընտրութիւնները: Թէ եւ կինները կը ներկայացնեն 700 հազար ընկերներուն 50 առ հարիւր համամասնութիւնը, անոնք իրաւունք չունին քուէարկելու:

Խորհրդարանի 50 անդամներուն տիրաւորու համար ընտրապայքար կը տանին 248 թեկնածուներ, որոնք եօթը տարբեր կուսակցութիւններ եւ շարժումներ կը ներկայացնեն: Իշխող Սապահ ընտանեկան թեկնածուներ չկան, որովհետեւ ինչ որ ալ լոյս աղբիւրներ, գահաժառանգ իշխանը պիտի կազմէ կառավարութիւնը, որ

անպայման ընտանիքին նախարարներ պիտի ունենայ, որոնք ի պաշտօնէն նաեւ խորհրդարանի անդամ կը դառնան:

ՈՌԻՍԱԿԱՆ ՆԱԻ ՄԸ ԸՆԿՂՍԱԾ՝ ԹՈՒՐԹՈՅ ԾՈՎԱՓԻՆ

ԱՆԳԱՐԱ, 29 (ՌԷՕԹԸՐ) - Ռուսական ճամբորդատար նաւ մը Շարաթ գիշեր ընկղմեցաւ Սեւ ծովու թորական ափերուն մէջ, թանձր մշուշի եւ փոթորիկի հետեւանքով, հաղորդեց «Անտալիա» լրատու գործակալութիւնը:

Թուրքիոյ եգերապահ ուժերը կրցան չորս հոգի փրկել, սակայն նաւու անձնակազմի եօթը անդամները (բոլորն ալ թուրքեր) տակաւին կորսուած կը նկատուին: Փրկարար խմբակները կը փորձեն գանոնք գտնել:

ՍԷՆԻԼ - Ըստ Հարաւային Քորէայի, Հիւսիսային Քորէայի տարածքին 10 բանտ-գաղթականներուն մէջ, շուրջ 200 հազար քաղաքական բանտարկեալներ արգելափակուած են:

ՔՈՒՆԻՍԻՆ - Միջին-բալկան բանակը ըմբոստութիւններու հիւսիսային միջնորդները գրաւած է, ըստ զինուորական բան-բեր մը: Անկախ ըմբոստներու հակաշփոխութիւնը կ'արգելափակուի միջնորդները գրաւած է, ըստ զինուորական բան-բեր մը: Անկախ ըմբոստներու հակաշփոխութիւնը կ'արգելափակուի միջնորդները գրաւած է, ըստ զինուորական բան-բեր մը:

(ՌԷՕԹԸՐ)

Speedway
BLANCO CENTER
Հեռ. 585545-268962

ՕՐՈՒՄԸ ԴԱՐՈՒ

- ԿՈՂԻԿ
- ԿԱՍԿԱՐԱՅԻ
- ԿՐԱՅ ԵՓԱՅ
- (ԸՈՒԹԸԼԵԹ ԿՐԻԼԷ)
- ՏԱՊԱՆՈՒՄ
- ԳԵՏՆԱԽՆՆՈՐ
- ԱՂՅԱՆ

ՄԱԿԸ ԿԸ ՓՈՐՁԷ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ԳՈՅԱՅՆԵԼ ԱՅԴԱՆԻՍԱՆԻ ՄԷՋ

ՔԱՊՈՒԼ, 29 (ՌԷՕԹԸՐ) - ՄԱԿի յատուկ պատուիրակ Նորպրթ Զոյ Կիրակի օր իր առաջին տեսակցութիւնը ունեցաւ Աֆղանիստանի խաղաղական «Թալի-վան» շարժումին հետ, որ իր հակակշիռին տակ առած է մայրաքաղաքը՝ Քապուլը:

Հոյ ըսաւ, որ ՄԱԿ կ'ուզէ հետապնդել տիպոկը՝ Քապուլի նոր արմատական ղեկավարներուն հետ: Հոյ, որ տեսակցութիւն ունեցած էր «Թալիվան»ի ղեկավար Մուհամմադ Ռապսանիի հետ, դիտել տուաւ, որ ՄԱԿ կ'ուզէ շարունակել գործակցութիւնը:

«Թալիվան»ի ուժերը Ուրբաթ օր գրեթէ առանց արիւնահեղութեան գրաւած էին Քապուլը եւ ապա գրե-դական հարած ու կախած՝ նախկին նախագահ Նաճիպ-դին ու եղբայրը: Ռապսանի Կիրակի օր խոստացաւ բանակցել հիւսիսի ղեկավար գործարար Ապտէլ Ռաշիտ Տոսթուէին հետ, աւելցնելով սակայն, որ որեւէ կապ պիտի չհաստատուի տապալած նախագահ Պուրհանուտին տիրէ Քապսանիի հետ: Ան աւելցուց, որ պաշտօնանկ եղած նախագահն ու վարչապետ Ղալապուտին Հիք-մաթիար չեն ներկայացնել աֆղան ժողովուրդը եւ դե-րակատարութիւն պէտք չէ ունենան: «Թալիվան»ի ղե-կավարը աւելցուց, որ մօտ օրէն կ'առաջարկուի մը պիտի կազմուի Քապուլի մէջ եւ երկիրը պիտի ղեկա-վարուի իսլամական օրէնքին համաձայն:

ՏԱՃԻԿՍԱՆԻ ՍԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՅ

ՄՈՍԿՈՒԱ, 29 (ՌԷՕԹԸՐ) - Տաճիկիստան - Աֆղա-նիստան սահմանագիծին վրայ բախումներ տեղի ունեցած են շաբաթավերջին, ռուսական ուժերուն եւ տաճիկ ըմբոստներուն միջեւ: Լրատու գործակալութիւններ յայտնեցին, թէ գինուորները կասեցուցած են ըմբոստ-ները, որոնք կը փորձէին Աֆղանիստանէն Տաճիկիս-տան թափանցել: Շարաթ օր ռուս գինուոր մը գոհ գա-ցած է:

ԲՐԻՏԱՆԻՈՅ ԱՇԽԱՏԱՌԱԿԱՆՆԵՐԸ Կ'ԱՇԽԱՏԻՆ ՄԻԱՑՆԵԼ ԸԱՐՔԵՐԸ

ԼՈՆՏՈՆ, 29 (ՌԷՕԹԸՐ) - Բրիտանիոյ ընդդիմա-դիր Աշխատաւորական Կուսակցութիւնը, որ կը պատ-րաստուի յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւն-ներէն առաջ իր վերջին համագումարը կայացնելու, Կիրակի օր փորձեց ներկայացնել միացեալ ճակատ մը, 17 տարի իշխանութիւնէն հեռու մնալէ ետք, դարձեալ քուէարկողները ներգրաւելու ճիղով մը:

Կուսակցութեան ղեկավարը՝ Թոնի Պլէր, որ ըստ նախատեսութեանց, յառաջիկայ Մայիսի ընտրութիւն-ներուն պարտութեան պիտի մատնէ պահպանողական

վարչապետ ձոն Մէյճրը, արմատական փոփոխութեան ենթարկած է կուսակցութեան իմացիօնը, սենտիքան-երուն կապերը թուցնելով եւ հրաժարելով ճարտարա-րուեստ պետականացնելու իր յանձնառութենէն:

Սակայն, կարգ մը ընկերավարականներ մտահոգ են Պլէրի պարտադրած փոփոխութեանց արագ ընթացքով: Անոր փոխանորդը՝ ձոն Փրէսթը շաբաթավերջին զգու-շացուցած է, թէ բարեկարգումներու արագ ընթացքը կրնայ ժխտական հետեւանք ունենայ, նկատի առած, որ Աշխատաւորական Կուսակցութիւնը, որ աւանդակա-նօրէն կը յենի աշխատաւոր դասակարգին վրայ, անոր անդամ քուէարկողները պէտք է ներգրաւէ 1979-ին ի վեր առաջին անգամ լոյս աղբիւր իշխանութեան վերադառնա-լու համար:

ԵՕԹՆԵՐԸ ՊԻՏԻ ԶՆՋԵՆ ԹԵՐԱՃ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՊԱՐՏԵՐԷՆ ՄԱՍ ՄԸ

ՈՒԱՇԻՆԿԻԼԸ, 29 (ՌԷՕԹԸՐ) - Ճարտարարուես-տի Եթեզեւտէ Շարաթ օր Ուաշինկթոնի մէջ գումարած իրենց ժողովին ընթացքին նախատեսեցին, թէ համաշ-խարհային տնտեսութիւնը բարելաւում պիտի արձա-նագրէ, ինչպէս նաեւ անոնք խոստացան օժանդակել աղքատ երկիրներուն, որպէսզի օգտուին նախատե-ուած բարգաւաճ վիճակէն:

Միւս կողմէ, Եթեզեւտէ ելեմուտքի նախարարները գոհունակութիւն արտայայտեցին դրամանիշերու սա-կերուն ներկայ կայունութեան մասին:

Միացեալ Նահանգներու գանձատան նախարար Ռո-պրթ Ռուպին ըսաւ, թէ նպատակու համար աղքատ երկիրներուն, Եթեզեւտէ պարտաւոր ալ երկիրներ պատրաստ են այդ երկիրներուն մէկ մասին պարտքերը մինչեւ 80 առ հարիւր ջնջելու:

ՀՕՐԸ ԺԱՌԱՆԳՈՒԹԵՆԷՆ ՄԱՍ ՄԸ ԿԸ ԳՆԷ

ԼՈՆՏՈՆ, 29 (ՌԷՕԹԸՐ) - Ըստ բրիտանական «Տը Սանտէլ Թալմը» թերթին, «Պիթըր» խումբին նախ-կին անգամներէն ձոն Լենքլի տղան ձիւլըն այս ամսեակի զինած է խումբին մ